

# ՍԵՒ ՕՐԵՐ

VI

Քնած է աշխարհը։ Միպանայ սարի վրայ էլ խաղաղութիւն է տիրում։ այնտեղ էլ մարդիկ քնած են։ Գիշեր է. մէկ երկինքն է արթում, նրա բիւրաւոր փայլուն աշքերն աստղերի ձևով թարթում են և սիրով նայում քնած երկին։ Գիշերային հովը խաղում է խոտերի և ծաղկեների վրայ այնքան մեղմութեամբ, այնպէս քնչութեամբ, որ առես նրանց ականջներին փափալով օրօներ է ասում՝ որ խաղաղ ու հանգիստ քնեն զով գիշերուայ գրկում։ Այս ու այն խոռոչից, այս ու այն սարալանջից լսում է լեռնային ջրերի կարկաչիւնը, միշտ միակերպ, միշտ գուրեկան։ Հեռուից՝ գիշերային հովի թևերի վրայով քրդական սրնդի մելամաղձոտ, վշտոտ ձայնն է գալիս. ով գիտէ, որ ձորում, որ գարի վրայ հովիւը հսկում է մակաղած ոչ խարներին և իր քունն ու միայնութեան ձանձրոյթը փարատելու համար ածում է իր աղուաձայն շումն։ Եւ գիշերային հովիկը, և ջրերի անընդհատ կարկաչիւնը, և սրնդի տխուր հնչիւններն այնքան ներդաշնակ են իրար հետ, այնքան պատշաճ լեռնային գիշերին. Դրանք ըուլորն էլ վայրենի բնութեան, լեռնային աշխարհի զաւակները, նրա անբաժան մասերն են։

Հիւսնիւրէգի օբան էլ քնած է։ Խաւարի մէջ, ինչպէս մութ կէտեր, հաղիւ ծրագրուող սեւսե վրաններից ձայն-ծպտուն չի լսում; նրանց մէջ իշխում է խաւարն ու խոր քնի լուռթիւնը։ Վրանների առաջ շըն-Սեբատեմբեր, 1901.

թըռկած ահագին գամփոներից ոմանք մրափած են դունչները թաթերի մէջ առած, ոմանք էլ ուշագիր ականջ են դնում ամեն մի շուկի, ամեն մի ձայնի, և երբ իրանց տիրասիրական զգացմունքները վիրաւորող որևէ կասկածաւոր ձայն են լսում, միահամուռ հաջոցով վեր են ցատկում և կորչում խաւարի մէջ՝ աղմկելով լեռնային գիշերուայ խաղաղութիւնը. այդ ժամանակ վրանների առաջ հանդարտ ու անշարժ կանգնած կամ պառկած ձիաներն ու միւս անասունները բարձրացնում են իրանց գլուխները, սրում են ականջները, որևէ կասկածաւոր ձայն կամ շշուկ որսալու համար, չքում են ազները՝ աշխատելով խաւարի մէջ որևէ ստուեր որոշել, որևէ շարժուն, վտանգաւոր կէտ նշամարել:

Նրանց անհանգստութիւնն ի զուր չէ, բնազդը նըրանց չի դաւաճանում. ահաւոր է լեռնային գիշերը: Ո՞վ գիտէ, այնտեղ ձորում, դէպի ուր վաղեցին զգոյշ չները, կամ այն ժայռերի մէջ, այն լեռան կատարին ինչ գաղան է թափառում՝ յարմար ժամանակի սպասելով իր որսը ճանկելու համար:

Մազէ վրանը գիշերային չարիքի դէմ կռուելու միջոց չունի, նա հաղիւ է կարողանում իր ակրոջը պաշտպանել անձրեկից. մարդն այդտեղ իր ու իւրայինների կեանքը ճակատագրի խնամքին և իր չների զգաստութեանն է յանձնում: Բայց Հետմիւրէդն աւելի զգաստ է և աւելի զգոյշ, քան սովորական մահկանացուները, և ահա խաւարն իջնելուն պէս, բացի բազմաթիւ չներից, նրա թանկագին կեանքը վրայ հսկում են նաև երկու մարդ պահպաններ: Նրանցից մինը դանդաղաքայլ պլատոյտներ է գործում դէպի վրանի շուրջը, մերթ ընդմերթ պոռալով՝ «հայհօյ». դա Մստօն է: Վրանի առաջ ըէգի ննջարանին բոլորովին մօտիկ նստած է մի վայել չահսակ քիւրդ, որ ոտքից ցգլուխ զինուած է. նա երգում է քաղցր ձայնով, որպէսզի իր տէրը և նրա քնքոյշ խանումները հանդիսաւ քուն առնեն վրանի տակ. այդ երգիչ պահպանը Աւդօ-Մուսօն է: Նա ժամանակ

առժամանակ ընդհատում է իր երդն ու ցած ձայնով  
հարցնում

—Աղա, տիւ ռազայի՞ (տէր, դու քնած ես):

—Նա, լաօ, նա. բեժա, բեժա—(նշ, զաւակս, նշ,  
ասա, ասա):

Եւ Մուսօն շարունակում է իր երդը. անցնում է  
դարձեալ մի քառորդ և աւելի ժամ, պահապանը կրկին  
ընդհատում է իր երդը և հարցնում.

—Աղա, տիւ ռազայի՞:

Բայց այս անգամ պատասխանի փոխարէն երդիչը  
լում է վրանի խորքից իր տիրոջ խոմիոցը: Եւ արդա-  
րև բէդը քնեց ախորժելի երգերի ազգեցութեան տակ:  
Երդիչ պահապանը վերկացաւ դէպի իր ընկերը դիմեց:  
Նրանք սկսեցին միասին դանդաղ քայլերով պտոյտներ  
գործել վրանի շուրջը: Լուռ էին. լուռ էր և շրջակաքը:  
Յանկարծ ընդհանուր խաղաղութիւնը վրդովուեց մի  
սուր, երկար ու անխորժ ձայնից. դա մի դայլ էր,  
որի չարագուշակ, սարսեցուցիչ ոռնոցը անցաւ քնած  
լեռների և ձորերի վրայով. ըների ամբողջ մի բանակ կա-  
տաղի հաջոցով դէպի նոյն կողմը դիմեց. «Հայհօյ» ձայն  
տուեց Մստօն: Կրկին լուցին ամենքը, կրկին խաղա-  
ղութիւն տիրեց. պահապանները շարունակեցին իրանց  
միակերպ պտոյտները: Մստօն սկսեց ինչոր ուրախ ե-  
ղանակ մոմուալ. Մուսօն լուռ էր: Ընկերը նրա երեսին  
նայեց փորձող հայեացքով, խաւարը չէր թողնում տես-  
նել ընկերոջ դէմքը, բայց համոզուած էր որ նա չափա-  
զանց տիսուր է. այդքան վշտոտ, տիսուր երգեր, ան-  
շուշտ նա մի շատ մեծ ցաւ ունի: Բարի քիւրդը ցաւակ-  
ցաբար էր նայում իր ընկերոջը: Նա վճռեց խօսեցնել  
և այդպիսով հանել նրան ծանր մտատանջութիւնից.

— այն ձայնը, բրա, ասաց Մստօն:

— նշ ձայն, Մստօն:

— Այն որ քիչ առաջ լսուեց դիմացի լեռան վրայից:

— Գայլի ոռնոցը:

— Այն, դայլի ոռնոցը. դա մի զարմանալի դայլ է,

շարունակեց Մստօն, մի շաբաթ առաջ նրա ընկերոջը մենք գնկակահար արինք հէնց այնտեղ, և ահա այդ անիծածը ամեն գիշեր որոշ ժամին գալիս, կանգնում է ընկերոջ սպանուած տեղը և ոռնում այդպէս զարհուրելի ձայնով: Ուղիղն ասեմ՝ ես վախ ասած բանը ըլ գիտեմ, դայլից, գաղանից որ ամենեին երկիւղ չունեմ, բայց այդ դայլի ոռնոցը սարսափեցնում է ինձ. ինչ է ուղում մեղանից այդ դաղանը:

—Վրէժ:

—Վրէժ:

—Այս, վրէժ, իր ընկերոջ վրէժը:

—Ի՞նչ ես ասում, Աւդօ, դայլ ու վրէժ, ով է լսել այդպիսի բան. նա խօմ մարդ է:

—Նա մարդից լաւ է, Մստօ. դայլը մարդից լաւ է, ասաց Աւդօն յուզուած ձայնով և լռեց:

Մստօն էլ լռեց: Ընկերը տարօրինակ էր: Այն ինչ ասաց. «դայլը մարդից լաւ է», ինչո՞ւ... Դարձեալ նրանք շարունակեցին պտոյտներ գործել, դարձեալ լսուեց դայլի ոռնոցն ու նրան յաջորդեց շների միահամուռ հաջոցը, ապա կրկին լռութիւն տիրեց: Լուռ էին ընկերները, առաջինը նորէն խօսեց Մստօն.

—Լսիր, Աւդօ. ինչո՞ւ դու այդքան տխուր ես, բրա, այդ ինչ զարմանալի, ինչ ծանր վիշտ է բլքը ու սիրտը:

—Բրա, ինչո՞ւ ես զարմանում. միթէ մարդ կարող է ուրախ լինել, երբ իր տնից տեղից փախստական լինի և օր ար աշխարհ ընկնի: Ինչիս վրայ ուրախ լինեմ. տեսար ինչպէս էր ոռնում դայլը. սրտի ցաւը կրակ է, Մստօ, թող Աստուած թշնամուս չը տայ:

—Բայց քո վիշտն աւելի մեծ է թւում ինձ, բան թէ կարող է պատճառել մարդիս զարիբութիւնը. դու սիրած ունես:

—Հապա չունեմ: արունքը նրա համար եմ արել, Մստօ. ընկերներիս հետ նրան փախցնելու գնացի, կոռի բռնուեցանք նրա ազգականների հետ և իմ

դնդակը նրա եղբօրը սպանեց։ Կոտրուէր ձեռքս, որ այդ դնդակը չարձակէի, այդ գնդակն եղաւ իմ դժբախտութեան պատճառը, օֆ, օֆ...

— Օ՛, Աւդօ, ցաւում եմ քեզ վրայ, բրա, սիրածից բաժանուելը ծանր, շատ ծանր բան է։ Խեղճ Մարօ. տեսնէիր ինչ էր անում, երբ նրան մենք փախցրինք։

— Ո՞ւմը, Մատօ, ինչ Մարօ։

— Մարօին, ումը, չես իմանում. չը տեսա՞ր բէ-դի սիրուն ջահէլ կնոջը, որ ուշաթափուեց երբ դու երգում էիր «Մարէ-Սիպանէն»։ ալսր նա Փլայ է։ Սնիծուի ձազօն, նա եկաւ լուր բերեց բէգին, թէ մի շատ սիրուն աղջկայ տեղ գիտէ։ Ախ, Աւդօ, ես ի՞նչ քան ցաւեցի, երբ փախցնելու օրը ձազօն գնդակով տուեց մի երիտասարդի վայր ձգեց. ասում էին որ Մարօի նշանածն էր, դժի պէս անզէն վազում էր մեղ վրայ։ Խեղճ աղջկին ի՞նչպէս էր լալիս։ Օ՛, առաջ այնքան սիրուն էր, այնքան սիրուն էր, հիմա շատ է մաշուել, գիշեր ցերեկ արտաս...

Մատօն խօսքը չը վերջացրեց և լռեց. նա նկատեց որ ընկերն սկսեց հեկեկալով լաց լինել, նա ու աց, որ իր նկարագրութեամբ ցաւեցըց ընկերոջ սիրալ, ուստի փորձեց միտիթարել նրան.

— Գիտեմ, բրա, դու էլ քո սիրածին յիշեցիր. ի՞նչ արած, երևի Աստծու կամքն է այդպէս եղել. ով գիտէ, գուցէ նա նորէն ողորմի քեզ և դու կրկին տեսնես քո սրտի սիրածին։ Բաւական է արտասուես, եղբայր, լաւն այն է պառկիր դու քնիր, մի փոքր հանգստացիր, ես մենակ կը հսկեմ, յետոյ կէս գիշերին քեզ կը զարթեցնեմ և ես կը պառկիմ հանգստանալու։

Առաջարկութիւնը վատ չէր։

Մուսօն գլուխը մի քարի վրայ գրեց և աչքերը փակեց. բայց քունը չէր մօտենում։ Ի՞նչպէս քնել... նրանից այնքան մօտիկ, միայն մի թափանցիկ պատի յետեռում գտնւում էր նրա սիրոյ առարկան, այն սիրոյ, որի անարգանքն այժմ տեսնում էր իր աչքերով։ Նրա

սրտում եռում էր վրէժիսնդրութեան զայրոյթը։ Նա առաջ միայն երեակայում էր իր սիրելուն հասած անծայր թշուառութիւնը, նա երեակայում էր նրան որևէ գաղանի պիղծ գրկի մէջ և այդ երեակայութիւնն անդամ նրա սիրալ կառը-կատր էր անում, իսկ այժմ... այժմ նա իր աչքերով տեսնում էր նախկին երեակայական սարսափելին։ Այստեղ՝ այն վրանի մէջ այժմ տանջլում է իր Մարօն, իսկ ինքն ստիպուած է նրան չօգնել և տանել այս բոլորը... Այդ մոքերը նրա հոգին ցաւեցնում էին, նրա գլուխը վառում էր, փակած աչքերի կոպերն այրում էին իրար, նա օձից խայթուածի պէս թաւալւում էր սառն գետնի վրայ։ Անցան յաւիտենականութեան չափ երկար ժամեր։ Մստօն բազմաթիւ պտոյտներ գործեց և ամեն անդամ պառկած Մուսօի մօտից անցնելիս զգուշութեամբ ականջ էր գնում նրա շնչառութեանը, ասես համոզուելու համար՝ քնած է նա արդեօք, թէ արթուն։ Մուսօն իր ընկերոջ այդ հետաքրքրութիւնը նկատեց. նա զգաց որ ընկերն ինչոր անելիք ունի, ուստի վճռեց քնած ձևանալ և գաղտագողի կերպով հետևել նրան։ Բայց կամաց-կամաց թըմքութեան նման մի բան եկաւ վրան, կոպերը ծանրացան. նա հազիւ էր լսում իր ընկերոջ՝ «Հայհօյլ» և ուսնաձայնը. Մուսօն կէս քուն՝ կէս արթուն էր։ Ահա նա լըսում է վրանից մի խորհրդաւոր փսփոցի ձայն, ահա ձայնը կամաց-կամաց սաստկանում է, մէկն ինչոր աղերսում, աղաչում է, արտասւում, դիմադրում. օ, Մուսօն նոյնիսկ տեսնում է, թէ ինչպէս զգուելի բէգը իր աղտեղի շրթունքները մօտեցնում է Մարօի գունատայտերին, մինչդեռ վերջինս Մուսօին կանչում է և ինչպէս է կանչում. ապա Մուսօն տեսնում է, թէ ինչպէս բէգը ձեռքը մեկնում և գրկում է Մարօին, իր գարշելի կրծքին սեղմում այնպէս պինդ, այնպէս սաստիկ, որ թշուառ Մարօն թուլանում, ուշաթափում է։ Մակայն այդքանով չի բաւականանում գաղան բէդը. Մուսօն տեսնում է թէ նա ինչպէս... բայց նա այլևս չը

կարողացաւ իրան զսպել և յանկարծ վեր ցատկեց տե-  
ղից կատաղած։

Նրա կիսաքուն աչքերին մի զարմանալի երևոյթ  
հանդիսացաւ, ինչպէս իր երազի շարունակութիւն. խա-  
ւարի մէջ նա նկատեց երկու մարդկային ստուերներ,  
որոնցից մէկը կին էր. նրան թուաց որ այդ զոյգը ոչ  
այլ ոք է, բայց եթէ բէդն ու Մարօն. ուստի մերկա-  
ցրեց իր սուրբ և վազեց դէպի այն երկու ստուերները,  
որոնք մի փոքր խոյս տալով վրաններից կան առան  
նրա առաջ հէնց այն ըոպէին, երբ Մուսօն պատրաս-  
տուեց հզօր ձեռքով իր սուրբ իշեցնել նրանցից մէկի՝  
աղամարդի դլիմին։ Բայց նրա ձեռքը թուլացաւ ցած-  
ընկաւ, երբ յանկարծ լսեց սարսափած Մոսօի հազիւ-  
լուկի ձայնը.

—Եաման, Աւգո, ի սէր Աստուծոյ, քո բախտն եմ  
ընկել. ես եմ, Մոսօն եմ։

Ապշած Մուսօն իր սոգերի տակ տեսաւ աղերսող  
Մոսօին և մէկ էլ մի ուրիշին՝ մի կնոջ։

—Դու ես, Մոսօ. այս ինչ է նշանակում, ով է այս  
կինը, հարցրեց Մուսօն։

—Զեմ ասի, Աւգո. նախ երդուիր քո բախտով, եր-  
դուիր քո սիրուհու արևով, որ դու ծածուկ կը պահես-  
լածդ, այն ժամանակ ես քեզ կ'ասեմ, թէ ով է այս  
կինը, ապա թէ ոչ, հարիւր սուր էլ սիրտս միես, մի  
բառ չես լսի։

Մուսօն երդուեց։

Այն ժամանակ Մոսօն ցած ձայնով նրան յայտնեց,  
թէ այդ կինը բէդի կանանցից մէկն է, որ վաղուց է,  
ինչ իրան է պատկանում, բէդին ատելով ատում է, և  
որ ամեն գիշեր այդ կնոջ հետ ինքը երանութեամբ լի  
ժամեր է անցկացնում և աւելացրեց։

—Աւգո, ես էլ գիտեմ, որ շատ վտանգաւոր բան  
է, բայց ինչ անեմ, չեմ կարողանում կտրուել։ Ինչ էլ  
պատահելու լինի, ես իմ Խազալին չեմ թողնի։ Դու էլ  
սէր ունես և իմ սրտի ցաւը հասկանում ես։ Աւգո,

վստահ եղիր ինձ վրայ և հաւատա՛ ինձ, շարունակեց  
Մուսօն, երր կինը գաղտագողի կրկին վրանը մտաւ:  
Քո լոռութեան փոխարէն ամենածանր պարագաներում  
յնոյ գիր իմ կատարեալ անձնուիրութեան վրայ. ես  
այսուհետեւ գլուխս անգամ չեմ խնայի քո հաւատար-  
մութեան համար, եթէ ծածկես իմ գաղտնիքը:

Մուսօն կրկին և կրկին հանդիսաւոր խոստումն  
տուեց: Լուսանում էր:

Անցան այնուհետեւ դարձեալ միքանի օրեր ու  
գիշերներ, երկիւղի և անհանգստութեան, յուսոյ և  
վստահութեան երկար ու ձիգ ժամերը Մուսօն ու Մա-  
րօն տեսնուելու և փախուստի ծրագիր կազմելու ոչ մի  
հնար չունեցան: Երկուսն էլ գիշերներն անբռն: ցե-  
րեկները մտատանջութեամբ էին անցկացնում: Յանկարծ  
մի անսպասելի և յաջող գիպուած պատահեց—Մուսօն  
հիւանդացաւ և տուն դնաց: Մուսօն մնաց մենակ վրա-  
նի պահապան: Այս հանգամանքը գործի յաջողութեան  
համար յուսոյ մի նշոյլ փայլեցրեց Մուսօնի սրտում: այժմ  
գոնէ առանց վկայի կարող էր գուցէ Մարօնին տեսնել  
գիշերը: Այդ գէաքի յաջորդ գիշերը Մուսօն երկար  
մտածեց: Ուշ գիշեր էր, երբ նա հրացանին յենուած՝  
նիրհեց: Նրան արթնացրեց մի ձայն, որ իր իսկական  
անունն էր տալիս: Մուսօն բոլոր մարմնով դողաց. ովկ  
կարող էր նրան կանչել իր իսկական անունով, եթէ ոչ  
Մարօն: Նա ցատկեց և խելադարի պէս առաջ վաղեց  
ձեռները տարածած, երբ տեսաւ իր առաջ մի կանացի  
կերպարանք:

—Մարօ...

—Սհրս, խիստ կերպով շշնջաց խորհրդաւոր անձը,  
ես Մարօն չեմ, Խաղանն եմ: Լսիր, Մուսօն, աւելորդ է  
ինձանից ծածկել, շարունակեց Խաղալը, տեսնելով թէ  
ինչպէս Մուսօն շփոթուեց և յետյետ քաշուեց. ես ա-  
մեն ինչ գիտեմ, Մարօն պատմեց ինձ. մեր գաղտնիքը  
դու և Մարօն գիտէք, ձերն էլ՝ ես ու Մուսօն. Մարօն  
իմ քոյլն է, Մուսօն՝ քո եղբայրը, Մի վախենար, վստահ

եղիր մեզ վրայ։ Մոտօն դիտմամբ է հիւանդ ձևացել ու հեռացել՝ այստեղից։ Նա կամեցել է քեզ մենակ թողնել։ Վազը գիշեր պատրաստ եղիր Մոտօն հետ փախչելու համար, Մոտօն այս սարի յետեռում ձեզ սպասելիս կը լինի. նա ձեզ կը տանի մեր սահմաններից դուրս կը հեռացնի և կը վերադառնայ։

Խազան այս բոլորը շնուրով ասաց ու շտապով անյայտացաւ։ Մուսօն մնաց ապշած ու շուարած. նա չը դիտէր հաւատամաւ իր աչքերին ու ականջներին, թէ այս բոլորը համարել մի խաբուսիկ երազ։ Բայց կամաց-կամաց նրա շփոթուած միտքը խալզաղուեց, իրերն ու պատահարները իրանց սովորական կերպարանքով ներկայացան նրան, կատարուածն իրողութիւն էր։ Ապա նա սկսեց նայել երկնքին, դիտել աստղերի ընթացքը անհանդստութեամբ ու անհամբերութեամբ։ Միակ բանը, որ այժմ նրան զբաղեցնում էր, գա այն էր, թէ երբ կը լուսանայ, որպէսզի համնի վերջապէս յաջորդ գիշերը։

Հասաւ վերջապէս ցանկալի և սարսափելի գիշերը։ Մուսօն հէնց նոր քնացրեց բէգին, վերկացաւ և սկսեց դանդաղ շրջաններ կատարել վրանի շուրջը։ Ժամանակ առժամանակ նա կանգ էր աւնում և ուշադրութեամբ ականջ դնում. խոտերի խշչոցը, քամու սօսափիւնը, անասունների փնչոցը, չների մումուցը, ձիերի գոփիւնը՝ բոլորը, բոլորը նրան ոտնաձայն էին թւում. նա սպասում էր Մարօնին։ Նրա սիրան այնպէս էր բարախում որ կարծես ուզում էր կրծքից դուրս թռչել. յուզմունքից ու անհամբերութիւնից հօգին այրւում էր։ Երկար սպասեց. յանկարծ նշա մէջ մի ծանր կասկած առաջ եկաւ, թէ մի գուցէ բէգը գիտէ իր գիտաւորութիւնը և գիտմամբ է քնած ձևանում, որ աւելի սարսափելի լինի պատրաստուած թակարդը, թէ Խաղալը մի նենդաւոր գաւաճան է, որ խաբել է Մարօնին և մի զարհուրելի դաւադրութիւն կազմել։ Գայլը լեռան վլայ կը կին ոռնաց. Մուսօն ցնցուեց. «վրէժ», մտածեց նա, ինչ որ

երէկ ասել էր Մատօին, վրէժ է կանչում գայլը, չը  
մտնել արդեօք վրանը, միւմի հարուածով խողխողել և  
բէդին, և դաւաճան Խազալին, և Մարօին, որ աղա-  
տուի այս գժոխային վիճակից, և ապա վերջ տալ նաեւ  
իր սեփական կեանքին... նա համարեա մօտ էր իրա-  
գործելու իր սարսափելի մտադրութիւնը, նա նոյնիսկ  
մօտեցաւ վրանի դռանը, բայց կանգ առաւ, սարսուռ  
անցաւ մարմնով. խոխողել Մարօին... ձեռքը կը բարձ-  
րանայ... նա մի փոքր մտածեց, մէկ էլ ուշադրութեամբ  
ականջ դրեց, բէդի խռմիոցը շարունակում էր. ոչ մի  
կասկած չը կար որ նա քնած է: Ոչ, դաւադրութիւն  
լինել չի կարող, իր երեակայութիւնն է վախեցնում ի-  
րան: Եւ Մուսօն վճռեց էլիսպասել... նրան թում էր,  
թէ գիշերուայ շատ մասն անցկացաւ, թէ այլես հազիւ  
կարելի լինի հեռանալ վտանգաւոր վայրերից մինչև  
լուսարաց, նա կարծում էր թէ տասնեակ ժամեր անց-  
կացան, անհամբերութեամբ երկնքին նայեց, յայտնի  
աստղերն ու աստեղախմբերը դեռ արևելքումն էին: Մի  
րոպէ նա նոյնիսկ մտածեց, թէ մի դուցէ Մարօի քունը  
տանի և թանկագին ժամանակն անցնի. բայց իսկոյն  
զգաց այդ ենթադրութեան բոլոր անհեթեթութիւնը.  
աղատութեան սպասող թոշնակը բաց վանդակի դռան  
առաջ կը քնի... Մարօն այդ գիշեր քնել չէր կարող:

Մինչ այդ մտքերը պաշարել էին նրան, յանկարծ  
վրանի մի եզրը բարձրացաւ, երկու ստուեր դուրս սու-  
դացին այնտեղից օձի զգուշութեամբ: Շատ ժամանակ  
հարկաւոր չեղաւ, որ Մուսօն ճանաչէր Խազալին ու  
Մարօին: Երկու սիրահարները անկարող եղան նոյնիսկ  
մի բառ արտասանել. չափազանց յուզմունքը նրանց լե-  
զուները կաշկանդեց, նրանք միայն գրկախառնուեցին  
և մարեցին: Եթէ մօտները կանգնած Խազալը նրանց  
ուշքի չը բերէր, ով գիտէ, որքան ժամանակ այդպէս  
պիտի մնային:

— Նուտ արէք, ասաց բարի քրդուհին, իրար սի-  
րելու ժամանակ կ'ունենաք, այժմ շտապել է հարկաւոր:

Մարօն թողեց Մուսօփն, Խաղալի գիրկն ընկաւ.  
Նրանք համբուրուեցին քոյրերի պէս. նրանք հրբան  
մխիթարել, սփոփել էին իրար փոխադարձաբար. եր-  
կու սիրահարները փորձեցին շարժուել, յանկարծ լսուեց  
գայլի ոռնոցը, Մուսօն կանգ առաւ. «վրէժ» անցաւ նրա  
գլխով:

—Խաղալ, ասաց նա, բայց իմ այսքան անարդանքը  
ես թողնում եմ առանց վրէժինդրութեան և այդ մի-  
միայն քեզ համար:

—Վրէժը սուրբ է և տղամարդի գործ, դու տղա-  
մարդ ես, պատասխանեց Խաղալը և նրա աչքերը վառ-  
ուեցին խաւարի մէջ կատաղութեան կրակով:

—Բայց նա քո ամուսինն է և ես քեզ պարտա-  
կան եմ:

—Նա մուսուլման է, իսկ ես եղիդի. Նա իմ հօրն ու  
եղօրս սպանեց, նա խլեց ինձ իմ սիրականից, նա իմ  
ամուսինը չէ, իմ դահիճն է. իմ ամուսինը Մուսօն է,  
իսկ բէդը իմ արնպարտն է. օ, եթէ իմ այս ձեռքը չը  
դողար...

Մուսօփն էլ հէնց այդ խոստովանութիւնն էր հար-  
կաւոր. բէդը Խաղալի արնպարտն էր, չը որ նա իր էլ  
արնպարտն էր, չը որ նոյնիսկ գայլը ահաւոր ոռնոցով  
վրէժ է գոռում. միթէ ինքն աւելի վատ է, քան գայլը  
որ այս գաղանին հանգիստ թողնի, իր կրած անար-  
դանքը՝ անպատիժ: Այս մտքերը վայրկենապէս անցան  
նրա գլխով և նա մերկացրած սուրբ ձեռքին վրանը  
մտաւ: Բէդը շարունակում էր խռմիոցով քնել: Վրա-  
նում թեթև, հաղիւ լսելի շուկ բարձրացաւ, պաղ եր-  
կաթի քսաց լսուեց, կտրուած կոկորդը խռոաց, բէդը  
միքանի ցնցում գործեց, թրպլուաց իր արեան մէջ և  
ամեն ինչ վերջացաւ:

—Վերջացաւ, հարցրեց Խաղալը, երբ Մուսօն  
դուրս եկաւ:

—Վերջացաւ, կարճ կերպով պատասխանեց Մու-  
սօն:

Վայրենի քրդուհին մօտեցաւ և համբուրեց այն ձեռքը, որով լուծուեց իր վրէժը:

—Գնանք, ասաց Խազալլը, այժմ մենք էլ ձեզ հետ, մենք էլ չենք կարող այստեղ մնալ, Մստօն էլ ինձ հետ կը փախչի:

Փախստականներն անյայտացան խաւարի մէջ: Մըստօն ու Խազալլը դէպի Բարդողեան լեռները, դէպի Ռուսաստան դիմեցին, իսկ Մարօն ու Մուսօն դէպի Գ... գիւղը:

Լուսացաւ: Իրարանցումն ընկաւ ամբողջ էլիաթի մէջ. այսպիսի յանդգնութիւն մինչև այժմ ոչ ոք չէր լսել, բէդի երկու պահապանները փախցրել էին նրա երկու կանանցը՝ սպանելով բէդին: Ամբողջ էլիաթը մի մարդի պէս ոտքի կանգնեց, ասես թէ ամենի ընտանեկան պատիւն էր անարդուած: Աւարի գնացած ձիւսորները ամենքն էլ յետ եկան, հասաւ նաև բէդի եղբայրը՝ Բահլուլ-բէդը: Ամենքն էլ զինուեցին և որսկան շների պէս լեռներն ընկան իրանց աղայի վրէժը լուծելու համար: Էլիաթի պատիւը պէտք էր փրկել և այդ՝ միայն և եթ յանդուգն փախստականների արիւնով: Ամենքն էլ համոզուած էին որ նրանք դէպի Ռուսաստանն են դիմել, քանի որ անծանօթ երդիչը իրան անուանել էր Մոսկովի երկրից, ուստի բոլորն էլ դէպի սահմանը, դէպի Բարդողեան լեռները դիմեցին: Այս հանդամանքը փրկիչ հանդիսացաւ Մուսօնի և Մարօնի համար, բայց Խազալլի և Մարօնի կորստեան պատճառ դարձաւ: Հաւածողները մի օր յետոյ կարողացան վերջիններին հասնել Բաշդողեան լեռների ստորոտներում, Զար-Մալա սարից ոչ հեռու: Մստօն յետ նայեց և տեսաւ թշնամիների բազմութիւնը, կանդ առաւ, փախչելն անօդուտ համարելով: Այժմ հարկաւոր էր կեանքը թանգ ծախել, որքան հնարաւոր է: Եւ նա ճանապարհից դուկա դալով Խազալլի հետ միասին մի ժայռի յետեւում կանգնեց: Սկսուեց մի անհաւասար կռիւ: Մի կողմից թափւում էին տասնեակ գնդակներ և միւս կողմից միայն միւմի

հատ: Խազալը տալիս էր փամփուշը և Մստօն անդադար կրակում էր: Յանկարծ Մստօն գունատուեց, հրացանը ձեռքից վայր թողեց և կախուեց Խազալի ուսից: Թշնամու մի գնդակ նրան կրծքից մահացու հարուած տուեց: Խազալը դրկեց նրան, հանդարտ պառկեցրեց իր ոտների առաջ, հրացանը վերցրեց և առանց արիութիւնը կորցնելու՝ շարունակեց կրակել: Վայրենի ըըրդուհին իր կատաղութեան մէջ կուռում էր սիրածի դիակի վրայ ինչպէս ընկերը կորցրած էր վագր: Նրա գընդակները զուր չէին անցնում: Թշնամիները, երեսում էր, նրան ողջ բռնելու ցանկութիւն ունէին, որովհետեւ խնայում էին: Խսկ Խազալն անողոք էր: Վերջապէս նրա ձեռքում մնաց միայն մի փամփուշտ: Հը կամենալով ողջ ողջ թշնամու ձեռքն ընկել, նա վերջին փափուշտով լըցուած հրացանն իր կրծքին ուղղեց, հրացանը պայթեց և նա ընկաւ իր սիրածի դիակի վրայ անկենդան...

Այնտեղ, մենաւոր լեռների մէջ մինչև այժմ էլ անցւորականը կարող է տեսնել երկու հողաթումբ, որոնց վրայ բուսել են վայրի վարդենու անպաճոյն թփեր: Ամայի է տեղը, մոռացուած, վայրենի, կանաչը քիչ է, աղբիւրներ չը կան: Գարնան անձրեները միայն ըըջակայրում բուսցնում են քանիմի խղջուկ խոտերի ծիւեր և վաղանցուկ ծաղիկներ: Այդ ժամանակ հողաթը փերի վարդենիներն էլ կանաչում, կոկոնում են և ռաջին արևի հետ բաց են անում միքանի գունատ վարդեր, որոնք սակայն ամռան առաջին շոգ օրերին թառամում են, կախում և երեկոյեան թեթև հովլ խըլում է նրանց թերթիկները և քշում ցանում լեռներում ու ձորերում, ինչպէս մի անյայտ կեանքի տիսուր պատմութիւն, կամ մոռացուած մի աւանդութիւն: Մենաւոր վարդենիները մնում են դարձեալ անզարդ, դարձեալ սգաւոր ամայութեան մէջ՝ սպասելով յաջորդ գարնանը, որ նորից միքանի խղճուկ կոկոններով զարդարեն իրանց ոստերը: Այդ թփերի ամեն մի ծիլը, ամեն մի ոստիկը, սակայն, ծածկուած է հնատիների փաթոյթ-



Ներով. ամեն մի անցուորական սրբազան պարագ է հաւ մարում իր զգեստի որևէ մասը պոկել և աւելացնել այդ փաթոյթների վրայ:

Ո՞վեր են պառկած այդ մոռացուած հողաթմբերի տակ, այդ տխուր, սգաւոր վարդենիների ստուերում, այդ ըստէ անցուորականը, նրան այդ հարկաւոր էլ չէ. նա գիտէ միայն, որ սիրահարուած և իրանց բուռն սիրուն զոհ գնացած երկու վատաբալստների գերեզմաններ են դրանք, որոնց պատմութիւնը ծածկուել է ժամանակի հնութեան մէջ... ի՞նչ փոյթ, նրանց սիրոյ յիշատակը ապրում է տակաւին և այդ սիրոյ պաշտամունքն է, որ կատարում է անցուորականը՝ իր զգեստի մի կտորը երկիւղածութեամբ վարդի թփի մի ոստին կապելով:

Այնտեղ են պառկած Մստօն ու Խաղալլը

## VII

Գիշեր էր: Գ... գիւղը վազուց ընկղմուել էր խոր քնի մէջ, խրճիթներում թագաւորում էր անթափանցիկ խաւարը: Աստծուն միայն ապաւինած այդ ժողովուրդը մի կարծ հանգիստ էր վայելում, բայց վախեցած մանկան պէս կծկուած, կուչ եկած: Միայն մի խրճիթում տակաւին պլալում էր ձէթի ճրադը, ազօտ լոյս սփռելով իր չորս կրղմը: Այնտեղ մարդիկ էին երևում ուրուականների պէս:

Մերունի Սհօն պառկած էր անկողնում գլուխը անդայ կերպով բարձին ձգած, պաղած աչքերը դռանը յառած, ասես թէ սպասելով մէկին: Նա հաղիւ էր շունչ առնում: Նրա գլխավերել նստած էր պառաւ նուբարը և ժամանակ առժամանակ կանացի խնամնու ձեռքով ուղղում էր հիւանդի վերմակը: Սհօն կռւում էր մահուան հետ, ինչ որ Մուսօն գնացել էր, կարծես թէ նրա սրտում յուսոյ մի չնչին նշոյլ էր ծագել, որ պահպանում էր նրա կեանքի վերջին զարկերը: Մանր

էր բաժանուել այս աշխարհից՝ առանց վերջին անդամ տեսնելու նրան, որ իր ամբողջ կեանքի խորհուրդը, էսութիւնն էր կազմում:

Հեռու, գիւղի մի ծայրից լսուեց շան չարագուշակ ոռնոցը, նուբարը երկիւղած նախապաշարմունքով խաչակիքեց իր երեմն ու հիւանդին. նա համոզուած էր որ այդ ժամին գրողները թուզում են կարի վրայ և շւները տեսնում են նրանց և ոռնում: Նա անհանգստութեամբ և երկիւղով նայեց հերդկին և ապա հիւանդին, կարծես կամենալով որոշել, թէ որբան մօտ է վախճանը: Հիւանդն առաջուայ պէս անշարժ էր և աչքերն անթարթ յառել էր գուանը: Հաւը խօսեց. բակում ինչ-որ ոտնաձայներ լսուեցին. շուտով գուռը ճոռալով բացուեց և շէմքի վրայ յայտնուեցին երկու մարդկային կերպարանքներ. պառաւը սաստիկ վախեցաւ: Ներս մտնողները մի փոքր էլ առաջացան. ճրագի լոյսը որբան և ազօտ էր, բայց և այնպէս պառաւը կարողացաւ ճանաչել Մուսօին և Մարօին: Նա վեր կացաւ և ճչալով գիմեց գէպի նրանց, չիմանալով նախ որին գրկի, որին համբուրի: Մարօն շտացով ազատուեց նուբարի գրկից և ընկաւ հօր անկողնի վրայ. լացը, սուգն ու աղմուկը լցրեց խրճիթը:

Կուրանան աչքերս, գոչում էր Մարօն հօրը համբուրելով և ծնկներն ու կուրծքը ծեծելով, այս ինչ օրում եմ տեսնում քեզ. ու լինէր իմ ծնունդը. ես արեցի, ես...

Հիւանդն այս աղմուկից ու իրարանցումից մի փոքր ուշքի եկաւ, քնից արթնացածի պէս աչքերն այս ու այն կողմը դարձրեց, ապա յառեց Մարօի գէմքին, յետոյ Մուսօին նայեց երկար, երկար, ասես աշխատելով իր թուլացած յիշողութեան մէջ զարթեցնել հին, թանկագին պատկերներ: Ճանաչեց նա արդեօք իր սիրելիներին, զգաց նրանց ներկայութիւնը թէ ոչ, այդ դըժուար էր իմանալ, միայն նրա խոր ընկած աչքերը խոնաւացան, շրթունքները խաղացին. օրհնութիւն, թէ աղօթք էր մրմնջում իր սիրելիների համար, գուցէ և

նղովկը՝ իր դահիճներին, որ թռաւ նրա այրուած որտից դէպի երկինք, յետոյ նա աչքերը փակեց և մնաց անշարժ:

— Զեր ստներին մատաղ, ասում էր Նուբարն արտասուելով. եկաք էլիի. էս ջրատար հալիւորը վաղօւց մեռած կը լինէր, եթէ աչքը ճանապարհին ըլ լինէր: Քանի՛քանի անգամ հոգեղարձ եղաւ: Փառք Քեզ, Աստուած. եկաք հասաք, էս ջրատարն էլ իր փափազն առաւ, եկաք, որ իմ չորացած գլուխն էլ ձեր ձեռքով հողի մէջ դնէք:

Մարօն շարունակում էր անիծել իր օրը, շարունակում էր արտասուել և համբուրել հօր ճակատը:

Բայց Սհօն էլ չէր զգում: Նրա վշտահար հոգին թռաւ դէպի երկինք՝ Ամենակալի աթոռի մօտ դնելու մարդկային վայրագութեան դէմ իր բողոքն ու սրտի ցաւերը:

Մուսօն այդ ժամին բոլորովին այլ հոգսով էր բըռնուած. շուտով կը լուսանար, հարեանները կը գան իւրանց յարգանքը մատուցանելու հանգուցեալ Սհօնին, Մարօնին կը տեսնեն, նրա փախստեան լուրը կը տարածուի և կը համնի քրդերի ականջին: Պէտք էր այդքանի առաջն առնել: Նուբարը հանգամանքներին անծանօթ էր, ուստի անհոգ էր, իսկ Մարօն այնպէս էր բռնուած սգով, որ նրա սրտում ուրիշ ոչ մի զգացմունքի տեղ չէր մնացել: Այդ ժամին եթէ նոյնիսկ նրան գային խողխողելու, նա գարձեալ մի ճիչ չէր արձակի և սիրով կը մեռնէր հօր թանկագին դիակի վրայ: Ի՞նչ յոյսերով էր գալիս. հօրը ժամ առաջ տեսնելու ցանկութիւնը նրա մէջ այնքան հղու էր, որ ամբողջ ճանապարհին այդ բնքոյշ էակը լուութեամբ տարաւ բոլոր դժուարութիւննելը, վախ զգաց, չը գողաց այն մոքից, թէ իւրանց յետևից անշուշտ ընկած կը լինեն և կարող են հասնել խողխողել: Այժմ հազիւ հասած, նա հօր սառը դիակն էր գրկում: Նրա վիշտն ահագին էր:

Երկնակամացը պատող խաւարը կամաց-կամաց քաշ-

ւում էր. արշալոյսը մօտենում էր, նրա հետ միասին աճում էր նաև Մուսօթ անհանդստութիւնը։ Արդէն հովիները դուրս քշեցին իրանց հօտերը դէպի դաշտ և սրինգների ձայներով թնդացրին շրջակայրը. ահա արազաղների ձայներն աղմկալի ու յաճախակի գարձան։ Այսօր՝ սովորականին հակառակ, լոյս աւետող այդ ձայները Մուսօթն արսափ էին պատճառում։ Նա կամացուկ դուրս եկաւ բակը. արևելքը մօտ էր շառագնելու, լուսոյ աստղը բարձրացել էր միքանի հարիւր կանգուն, արշալոյսի հաղիւ նկատելի նուրբ շողերը քնքոյշ գոյներով նոր ներկում էին արևելքը, էլի միքանի րոպէ և կը հնչուէին գիւղի եկեղեցու զանգակների ձայնը և բարեպաշտ գիւղացիք կը դիմէին Աստծու տունը։

Պէտք էր շտապել Մարօին մի տեղ թագնել, մինչեւ որ Սհօի թաղումը կատարուէր. այնուհետև երկով միասին պիտի սահմանն անցնէին և Ուռասատան դիմէին։ Ծրագիրը կազմուած էր դեռ ճանապարհին։ Մուսօն կամացուկ ներս մտաւ, մօրը դուրս կանչեց. նրան յայտնեց իր անհանդստութիւնը և Մարօին թագնելու անհրաժշտութիւնը։ Մօրը կարելի է ամեն ինչ հաւատալ։ Նրանք ներս գնացին։

—Մարօ, ասաց պառաւը, նրա ուսին դիպչելով, լացով բան չի դառնայ, զաւակս, Աստծու կամքն էր, եղաւ անցաւ. Վեր կաց մեր տուն գնանք, լոյսը բացւում է. այստեղ ախր մարդիկ կը գան...

Պառաւը միայն ակնարկեց վասնդի մասին։ Մարօն բարձրացրեց գլուխը, նայեց երկար ու անորոշ հայեացըով իր արտասուաթոր աչքերով, կարծես չէր հասկանում թէ բանն ինչումն է. յանկարծ ծանր իրականութիւնն ըմբռնելով՝ նա իր հայեացքը դարձրեց դէպի Մուսօն հարցական եղանակով, նրանից էր սպասում վճռական խօսքը։

—Վեր կաց, Մարօ, ուրիշ ճար չը կայ, վրայ բերեց Մուսօն վճռական ձեռք։

Մարօն համբուրեց հօրը, վերկացաւ և արտասոռեւ լով հետեւեց Մուսօխն։

Լոյսը բացուեց։ Հարևանները հաւաքուեցին Սհօենց տուն։ ցաւակցութիւնն ընդհանուր էր։ Ամենքը գիտէին որ խեղճ ծերունին ազջկայ կակծից մեռաւ, բայց և այնպէս նրանց այդ համոզմունքը զայրոյթի արտայաշտութեան պատճառ չէր դառնում։

—Ի՞նչ սև օրեր քաշեց խեղճ ջրատարը, ասաց մի ծերունի։

—Ջրատար... եանի նա էր ջրատար, որ մեռաւ պըրծաւ, թէ մենք, որ շարունակում ենք ապրել, վրայ բերեց մի ուրիշ ծերունի։

—Մեր ճակատագիրն է, մի տրանջացէք. Աստուած կամեցել է, որ մենք սևով ծնուենք, լացով ապրենք, սգով գերեզման իջնենք, ասաց քահանան. ինչ անենք, թէ բեռը ծանր է. աւելի կը կռանանք որ չընկնենք, հարուածը խիստ է՝ կը կծկենք մեր մարմինները, կը ձգձգենք մեր ջղերը, որ դիմանանք։ Մենք չենք ըողոքի, այլ կ'արտասուենք, չենք նզովի, այլ կ'ազօթենք։ Ինչ որ այնտեղ վերեւում վճռուած է, այստեղ ներքեւում փոխել չի կարելի։

«Հազար երանի քեզ», ասացին յուզարկաւորները մի-մի բուռը հող ձգելով Սհօի վրայ։ Ապա տուն վերադարձան, հոգու հացը կերան, ողորմին տուին. տէրտէրն էլ խօսեց հանդերձեալ կեանքի մասին, յորդորեց իր հօտին համբերել, տանել՝ վարձքը, հատուցումը երկնքում ստանալու համար։

«Երանի՛ սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին. երանի՛ որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից», ասաց տէրտէրը, և մարդիկ ցրուեցին այս սև աշխարհում, սև երկնքի տակ երանց սև օրերը քաշելու համար՝ որ հանդերձեալ կեանքում վարձատրուեն։

## VIII

Երեկոյ էր, արել ծածկուեց. մի սովորական օր էր, այդ էլ անցաւ, միայն առաջին մառախուզի հետ Գ... գիւղի արևմուտքում մի հատիկ ամպ խտացաւ և մնաց կանգնած։ Գիւղացիք այդպիսի ամպեր շատ էին տեսել, նոյնիսկ աւելի ահաւորներն ու մռայլները շատ էին պատել նրանց երկնակամարը, բայց և այնպէս այդ օրուայ ամպն ընդհանուրի ուշադրութիւնը դրաւեց։ Դա սարմափելի էր, և այն ոչ թէ իր մեծութեամբ կամ անօրինակութեամբ, այլ մի այնպիսի բանով, որ մարդիկ իրանց սրտերի խորքերում զգում, հասկանում էին, բայց քացատրել չէին կարող. «Այդ ամպը չարագուշակ է», ահա թէ ինչ կարող էին ասել նրա մասին։

Եւ յիրաւի գա մի շանթալից ամպ էր, որ բնութեան մի մօտալուտ և հաւառը խաղի համբաւն էր բերում։ Փոթորկի նշաններ կային։

Կենդանական բնազդը փրկարար է։ Բնութեան սպառնալից պատրաստութիւնները մարդիկ շուտով հասկացան. այդ երեկոյ գիւղացիք սովորականից աւելի շուտ տուն ըշեցին իրանց հօտերն ու նախիրները։ Հովվիւնները վտանդաւոր համարեցին բացօթեայ դիշերել, դաշտը վաղ դատարկուեց և ամենքն շտապեցին թըռչունների պէս ժամ առաջ ծուարել իրանց խղճուկ խըրակիթներում։

Այդ օրը երեկոն վերջալոյս չունեցաւ, խաւարը շատ շուտ կոխեց երկիրը, կարծես բնութիւնն շտապում էր։ Փութկոտ խաւարի հետ եկաւ նաև մի սպասողական դրութիւն։ Ամեն մի արարած, ամեն մի տերեւ, ծաղկի իւրաքանչիւր թերթիկ, փոքրիկ միջատից սկսած մինչև մեծ կենդանիները, մինչև մարդը, նոյն իսկ աղքիւր ու առուակ, դաշտեր ու ձորեր, լեռներ, բլուրներ, ամենքը, ամենքը կարծես շունչները բռնած լուռ սպասում էին, թէ ինչ է լինելու, և ինչ որ լինելու

էր, սովորական չէր, ահաւոր էր: Մոռթը բոլորովին իշխաւ, վրայ հասաւ այն խաւար, շատ խաւար գիշերներից մեկը, որ բնութիւնն առանձին սիրով ընտրում է, որպէս իր անսանձ ոյժերի, իր սասանեցուցիչ տարերքների խօլական մրցութիւնների համար յարմարագոյն ժամանակ:

Համատարած լոռութիւն էր, ոչ մի աղմուկ չէր խոռվում բնութեան հանդիսաւոր խաղաղութիւնը, միայն հետզհետէ սաստկացող քամին էր, որ կարծես լեռների կուսական կատարներից շղթայագերծ եղած՝ փշում էր գիւղի խրճիթների վրայ, աւելում; լիզում էր նրանց կոնածեւ կտուրները, ցրիւ էր բերում նրա վրայ շարուած խոտերի գէզերը, և առաջ. արշաւում մերթ կատաղի գաղանի պէս մռնչալով, մերթ ցաւից տանջուող հսկայի պէս ահաւոր հաւաշներ արձակելով և մերթ լալով ինչպէս անձար, անտիրական սգաւոր:

Ողջ երկնակամարը ծածկուեց, ոչ մի աստղ չէր պլազում; կարծես նրանք էլ սարսափած խոյս տուին անհունութեան խորքերը. միապաղաղ խաւարը ամպային քօղի տակ անհասկանալի խնամքով ծածկում էր այն ամենը, ինչ որ լուսոյ մի չնչին նշոյլ կարող էր կաթեցնել խաւար երկրի վրայ: Միակ լոյսը՝ որ երբեմն մի վայրկենով յետ էր քաշում խաւարի մռայլ քողը, կարծակն էր. ամբողջ բնութիւնը լցուած էր ինչ-որ անորոշ, սիրտ պատառող մռմռոցով, որից լեռներն իրանց ժայռերով գողում, սասանւում էին:

Գ... գիւղի փողոցներում ոչ ոք չէր երեսում. չներն անդամ լռել, կուչ էին եկել այս ու այն գէզի տակ, այս ու այն գոռան շէմքում: Դրսում կենդանի շունչ չը կայ բացի երկու հոգուց, որոնք անձայն ու վշտաբեկ, թափառում են Գ... գիւղի գերեկմանատանը: Ո՞վքեր են նրանք, և այդ սարսափելի ժամին ինչ են վնտրում մեռելների աշխարհում: արդեօք ուշացած ճանապարհորդներ են, թէ անտուն, անապաստան թշուառներ, ուրոնք կենդանի մարդկանցից մերժուած, մեռելների մէջ

են ապաստան վնարում բնութեան արհաւիրքից. մի գուցէ զայրացած ուրուականներ են, որոնք կենդանի ժամանակ անիրաւ աշխարհում իրանց նմանների ձեռքից լսմել են դառնութեան բաժակը և վշտահար ու չարատանչ փշել են իրանց վերջին շունչը՝ նզովը արթունքներին, իսկ այժմ վրէժխնդիր հոգով դուրս են սողացել իրանց յափառենական բնակարանից՝ չար աշխարհի սարսափն ու աւերածը հրճուանքով դիտելու համար։ Ոչ այս և ոչ այն, երկու կենդանի թշուառներ են նրանք, Մարօն ու Մուսօն, որոնք այդ զարհուելի գիշերը փախչում են իրանց հայրենի աշխարհից՝ օտար երկնքի տակ ժամանակաւոր հանդիսա վնարելու համար։

Նրանք դուրս եկան գիւղից խաւարն իջնելուն պէս, փոթորիկը նոր էր սկսուած. ճար չը կար, պէտք էր շտապել։ Նախորդ գիշեր Մարօն կտրի վրայ ոտնաձայներ էր լսել. ավ գիտէր, թէ ով էր և ինչէր կարող էին պատահել։ Նրանք չէին էլ վախենում փոթորկից, չէ որ թշուառները բնութեան արհաւիրք չը գիտեն։ Նրանք մարդկանցից էին վախենում, մարդկային չարութիւնը միշտ աւելի սոսկալի է, քան բնութեան արհաւիրքը։ Այսպիսի գիշերը ամենայարմարն էր մարդի չը հանդիպելու համար։ Եւ ինչ կար սարսափելու. երկնքի սեռութիւնը, բամու կատաղութիւնը մի տիսուր զուգագիպութիւն էր միայն նրանց սրտերի վիճակի հետ։ Աւելի հեշտ է տարւում ցան ու վիշտը, երբ բնութիւնն էլ է սև հագնում, երբ նա էլ է սուզ անում։ Խաւարն էլ չարգելեց նրանց. Մուսօն ճանաչում էր ամեն մի քարը, ամեն մի թուփը, ամեն մի փոսն ու ժայռը. կայծակն էլ երբեմն լուսաւորում էր փախստականների ուղին, այդքանը բաւական էր Մուսօն։

Նրանք գերեզմանատուն մտան վերջին անդամ համբուրելու Սհօի գերեզմանը։ Խաւարի մէջ իր հեծկլատանքներն ու հառաջանքը քամու կատաղի ոռնոցին խառնելով՝ երկար արտասւում էր Մարօն, մինչդու

Մուսօն նրա կողքին նստած, մէկ նրան էր նայում և  
մէկ սև երկնքին՝ սպասելով փոթորկի մեզմանալուն որ  
ճանապարհ ընկնեն: Բայց փոթորիկը հէնց այսօր տառ  
դիտմամբ գաղարելու միտք չունէր, բնութեան քաօնը  
շարունակում էր. կատաղի քամին վշտում էր անասելի  
թափով ու մոնչիւնով, իսկ սև երկնքը պատառ-պա-  
տառ էր լինում անընդհատ կայծակներով և ամսպոպի  
որոտը խլացնում էր տիեզերը:

Գերեզմանատնից մի փոքր այն կողմը ձգւում էր  
վ... ծովակը իր ժայռոտ ափերի մէջ, որոնք յայտնի էին  
«Արնքար» անունով: Ծովի էլ էր կատաղած, դողում էին  
Արնքարի ժայռերը: Խաւարի մէջ լուսում էր ալիքների  
գոռոցը: Ոչինչ չէր երկում, բայց կարծես բիւրաւոր  
գև հսկաներ ծովի արձակ տարածութեան վրայ մրցու-  
թիւն էին սկսել, խեղդուում էին իրար օրհասական  
այնպիսի հոնչիւն արձակելով, որից լեռներն իրանց  
ժայռերով քիչ էր մնում պատառուէին, փուլ գային:

Մուսօն բնութեան այս ըոլոր սալսափների տակ  
ճնշուած, մոռացել էր թէ ինչ է կատարելում իր շուրջը:  
Յանկարծ անընդհատ օրոտ ու կայծակի հետ սկսուեց  
անձրեւ: Մուսօն նայեց Մարօին, որ հօր հողաթումբը  
գրկած, վեր չէր բարձրացնում գլուխը և կարծես փոլիքը  
չէր ոչ փոթորիկը և ոչ անձրեւ:

—Վեր կաց, Մարօ ջան, ասաց Մուսօն անհանդիստ  
ձայնով. անձրեւ թափւում է, գնանք այ այն ժայռերի  
տակ պատսպարուէնք, թող անցնի անձրեւ, ճանապարհ  
ընկնենք:

Մարօն լուռ էր և անշարժ: Մուսօն մօտեցաւ,  
բռնեց Մարօի ձեռքից, բարձրացրեց նրան և համարեա  
բաշ տուեց իր հետ: Անձրեւ սասականում էր:

Հազիւ միքանի բայլ արած, նրանք երկսով էլ սար-  
սափած կանգ առան. նրանց թուաց, որ քամու ոռ-  
նոցի, ծովի շառաչի հետ միասին նաև մարդկային ձայ-  
ներ են. լուսում: Ոչինչ չէր երկում, բայց և փոթորիկը,  
և կայծակներն ու թափուող անձրեւ, և իրանց ծանր

կացութիւնը մոռացած, նրանք մնացին սառած իրանց տեղերում, աշխատելով թանձր խաւարի մէջ որևէ ստուեր որոշել, կամ որևէ հասկանալի ձայն լսել. բայց լսուող աղաղակներն անորոշ և խաւարն անթափանցիկ էր: Մարօն թրջուած ու դողալով՝ կպաւ Մուսօխն: Անցան էլի միքանի սարսափելի բոպէներ և ահա ձայներն աւելի որոշ և աւելի հասկանալի գարձան—վայի և յուսահատ ողբի աղաղակներ էին դրանք: Շուտով բոլորովին մօտիկ երեացին բազմաթիւ ստուերներ և քիչ յետոյ փախստականները տեսան իրանց շուրջը հարեանների խառնիճաղանձ մի բազմութիւն՝ նրը մերկ, նրը ստաբորիկ, նրը դլսաբաց, նրն իր զաւակների հետ, նրն առանց զաւակների, նրն իր ամուսնուն կոչելիս, նրն իր քրոջը, նրը եղբօրը և ամենն էլ միասին անհնարին սարսափից խելագար վիճակի մէջ, առանց արածները քննելու՝ վազում էին դէպի ծովը:

—Փախէք, եկան, գոռում էին այս ու այն կողմից:

—Ի՞նչ կայ, ի՞նչ է պատահել, հարցրեց զարհուրած Մուսօն:

—Գեղը կտրեցին:

Մուսօն ամեն ինչ հասկացաւ, ուրիշ հարցեր աւելորդ էին:

Գաղտնիքներ կան, որոնց ծածկելու համար ծովի անդունդներն անդամ քիչ են. եթէ սարերը փուլ բերես նրանց վրայ, ժայռերը չը ճչան, կը յայտնեն: Հիւսնիւրէդի սպանութեան և Մարօնի ու Մուսօնի փախստեան գաղտնիքն այդպիսիներից էր: Թափուած արիւնն այնքան թանդ էր Սիպանայ վրանաբնակ վայրենիների համար, որ նրանք գաղար առնել չէին կարող, մինչև որ նրա ամեն մի կաթիլի փոխարէն տանեակ անձինք զոհ չը բերէին, փոյթ չէր նոյնիսկ, եթէ զոհուզները անմեղներ էին. արիւն էր հարկաւոր, տաք, կարմիր արիւն, առատ արիւն... Բէզն էր սպանուած... ի՞նչ ասել էր Խաղալի և Մուսօնի մահը բէդի արեան թէկուզ մի կաթիլի առաջ: Էլիաթը չէր սգում, այլ մումում էր

ինչպէս վիրաւոր գաղան։ Բէդի եղբայր Բահլուլ-բէդը, որ այժմ էլիաթի պետն էր, մտածում էր Մարօին և Աւդօին դանել։ Նա կատաղած էր նաև ձազօի դէմ։ այն անպիտանն էր սկիզբ գրել այդ արիւնոտ գործին և բէդը հրամայեց կանչել ձազօին։

— Լսիր, ձազօ, քո բերած ֆլայ աղջիկը իմ եղբօր մահուան պատճառ դարձաւ, եթէ շուտով չը դանես Մարօին և Աւդօին և իմ ձեռքը չը յանձնես, քո արիւնը պիտի թափուի, ուղիղն ասած՝ ես հէնց այժմ կը հրամայէի բեզ շանսատակ անել, բայց դու գեռ ինձ հարկաւոր ես, դու պէտք է դանես նրանց։

— Տէր, Մարօն ֆլայ էր, միթէ նրանց ամբողջ գիւղ մի Մարօ չարժէ... .

Սկնարկը հասկանալի էր, բայց այդ բանը բէդն արդէն մտածել էր, վրէժինդըսութեան ծրագրի մի մասն էր այդ։

— Դա իմ բանն է, որոտաց բէդը, նախ Մարօն ու Աւդօն։

Եւ ձազօն գողալով հեռացաւ, որ կամ կատարի բէդի պահանջը կամ, հակառակ դէպքում, գլուխն առնի կորչի և էլ երբէք յետ չը դառնայ։

Բէդը որոշեց մինչև ձազօի վերադարձը անձամբ գնալ և պատժել Գ... գիւղի ֆլաներին այն պարզ, հասկանալի պատճառով՝ որ Մարօն, բէդի սպանութեան այդ պատճառը ֆլայ էր և Գ... գիւղացի. Նա այնտեղ ազգականներ կունենար։

Մարօի և Մուսօի գուրս գնալուց անմիջապէս յետոյ Գ... գիւղը յարձակման ենթարկուեց։ Բահլուլ-բէդի հրոսակային խումբը յատկապէս այսպիսի գիշեր էր ընտրել իր յարձակման համար, որ բնակիչները փախուստ տալ չը կարողանան։ Աւազակները չորս կողմից գիւղը շրջապատեցին և կրակ տուին։ Փոթորիկն օգնեց նրանց արագ կատարելու պժդալի գործը. մինչև որ անձը վրայ կը հասնէր, բոյերը քամու չնչով բորբոքուած կարճ ժամանակում լափեցին գիւղի տների մեծ մասը,

բնակիչները մասամբ կոտորուեցին և մասամբ՝ իրանց քնաթաթախ, մերկ զաւակների ձեռքից բռնած փախան լեռները. մի խումբ էլ դէպի ծովակը վագեց։ Ահա այդ խմբին պատահեցին Մուսօն ու Մարօն։

Դէպի ծովը վագող փախստականները յոյս ունէին նաւակներով խոյս տալ, մի աղատարար անկիւն համնել. նրանց սարսափած միտքն անկարող էր եղել հասկանալ որ այս սարսափելի փոթորկի ժամանակ անհնարին է ծով իշնել։ Բայց նաւակներ էլ չը կային, քամին նրանց խել էր ափերից։ Բազմութիւնը հաւաքուելով կանգ առաւ Արնքարի վրայ սաստիկ անձրսի տակ։ Իսկ նըրանց առաջ շարունակում էին շառաչել ծովի ալիքները որոնք լեռնանում, բարձրանում էին վեր, ասես կամենալով երկնքին համնել, ապա փուլ գալով վազում էին դէպի Արնքարի վրայ կծկուած թշուառները։ Եթէ էլի մի կէս ժամ երկարէր այդ սարսափելի կայութիւնը, երեք բազմութիւնը կամաւ ծովը կը թափուէր, բաւական էր միայն որ մի յուսահատ՝ առաջին օրինակը տար, կամ թշնամու ձիու առաջին դոփիւնը լսուէր։ Յանկարծ լսուեց մի զարմանալի ձայն այս բոլոր հառաչանքների, այս բոլոր վայելի մէջ, և այդ ձայնն առում էր՝

### —Մի վախեցէք։

Ամենքն էլ լսեցին, բայց ով կը հաւատար իր ականջներին. այդպիսի ձայն այդ սարսափելի ժամին... Ակար ինչպէս չը վախենան, փրկութիւն կայ, ով է փըրկիչը. երկնքը նրանց համար վազուց է ամուլ, ողորմութիւն չը կայ. միթէ որեւէ մահկանացու կարող էր փըրկել նրանց, երբ բնութիւնն անգամ նրանց դէմ էր։ Ծնվը և միմիայն ծնվը կարող էր այդպէս որոտալ, միայն նա կարող էր ասել՝ «մի վախեցէք», որովհետեւ միայն նա բոլորի համար տեղ ունէր իր սառը ծոցում։ Այսպէս էին մոտածում փախստականները. սակայն ձայնը կրկը նուեց և այս անգամ աւելի համարձակ, աւելի բարձր։

### —Մի վախեցէք, չուան շնուցէք, չուան տուէք,

գոռում էր Մուսօն. այ մարդիկ, գուք ի՞նչ էր սպել,  
տղամարդ չէք. կապեցէք իրար՝ ինչ որ ունէք վրաներդ  
և մի չուան տուէք, ի սէր Աստուծոյ, համարեա յուսաւ  
հատ կատաղութեամբ գոռում էր Մուսօն, տեսնելով  
որ թանկագին ժամանակն անցնում է, իսկ շնկուած ու  
սարսափած բազմութիւնը չի էլ մտածում իր փրկու-  
թեան համար որևէ բան ձեռնարկել. Մուսօն համոզուած  
էր որ քրդերը ուր որ է՝ վրայ կը հասնեն, իսկ փախ-  
չել անհնարին է, ուստի աղերսում էր մի չուան տալ  
իրան:

Բարեբախտաբար Մուսօն վերջին կանչն այնպէս  
հզօր էր ու համոզիչ, որ տղամարդիկ առանց նըա նը-  
պատակն իմանալու սկսեցին իրանց զգեստներից ու  
գոտիներից մի պարան կազմել. Մուսօն ի՞նչ պիտի ա-  
նէր պարանը:

Ծովագինեայ ժայռերի մէջ խաչերով ու յիշատակա-  
րաններով քանդակուած բազմաթիւ այրեր կային: Դրանք  
նախնի դարերի բրիստոնէութեան հալածանքների ժա-  
մանակ ծառայել էին իրեւ քրիստոնեաների ապաստա-  
րաններ և աղօթատեղեր, ուր Փրկչի առաքեալների ա-  
ռաջին հետեւողները պաշտել էին իրանց Յիսուսին և  
Նրա խաչը, իսկ այնուհնաւե աւելի ազատ դարերում  
աշխարհից խոյս տուած կուսակրօնները այդտեղ էին  
ապաստանել և այդտեղից դէպի երկինք ուղղել աշխար-  
հի խաղաղութեան և շինութեան համար իրանց աղօթք-  
ներն ու մրմունջները: Դարերի ընթացքում ծովի ջու-  
րը կամաց-կամաց սրանցից շատը խսպառ ծածկել  
էր, շատերն էլ գեռ երևում էին ջրին մօտիկ, կամ կի-  
սով չափ ջրով լցուած: Այսպիսի մի այր էլ գտնում էր  
հէնց Արնքարի տակ, որի վրայ խմբուել էին փախստա-  
կանները. այդ գիտէին համարեա ամենքը, բայց Մու-  
սօն յիշեց առաջինը: Մի ժայռ ծովափի ընդհանուր մա-  
կերեւոյթից գուրս ցցուելով կազմել էր մի հսկայական  
պատշգամբ հէնց այրի անցըի վրայ, այնպէս որ վերից  
անցըը չէր երեւում և անհնարին էր կարծել անդամ

թէ այնտեղ ժայռի տակ պյրի մուտք կայ։ Զուրը հաւասարուել էր համարեա այրի բերանին և այնտեղ ներս մտնելու համար անհրաժեշտ էր գոնէ միքանի քայլ ջրի մէջ գնալ։ Այրի ներսն աւելի բարձր էր, բան թէ անցքը, ջուրն այնտեղ թափանցել էր կարողանում։ Նաւակով միայն կարելի էր մօտենալ այդ այրին, բայց անծանօթ մարդը հեռուից կը դժուարանար որոշել այրի մուտքը, իսկ վերի ժայռերի միջից իջնել համարեա անհնարին էր։ Գ...եցի երիտասարդները բազմութիւ փորձեր էին արել, և միայն ճարպիկ ու գիւրաշարժ Մուսօին էր յաջողուել ժայռերը չանգուելով իջնել և այրին հասնել։ Եւ ահա այժմ Մուսօն յիշեց նոյն այրը և որոշեց փախստականներին այնտեղ պատոպարել։

Փոթորիկը դեռ շարունակում էր. ծովս ու երկինքը իրար հետ միացան անձրեի ջրով։ Բայց Մուսօն շր կար, միայն Մարօն նկատեց, թէ նա ինչպէս ծածկուեց ժայռերի մէջ։ Քիչ յետոյ Արնքարի տակից լսուեց Մուսօի հզօր ձայնը.

—Պարանով կախեցէք մէկին։

Այժմ միայն ամենքն էլ հասկացան, թէ ինչու էր Մուսօն պարան ուզում։ Ամենքն էլ սրտապնդուեցին, երբ առաջինը մօտեցաւ Մարօն և ցած կախուեց։ Այնուհետեւ սկսեցին կախուել և ուրիշները, աշխատելով նոյնիսկ մէկը միւսից առաջ ընկնել. պարանը փրկում էր նրանց։ Եւ այսպէս մէկիկ-մէկիկ կախուեցին մինչև վերջին մարդը, ապա Մուսօն վեր բարձրանալով ցած իջեցրեց վերջինին և ինքն էլ պարանը հաւաքելով նոյն ճանապարհով ցած գնաց այրը։

Արշալոյսը մօտ էր. փոթորիկը դադարում էր։

## IX

Լուսացաւ. ծովը խաղաղուեց. երկինքը պարզուեց. արեգակը կրկին հաշտ կերպով թափեց երկրի վրայ իր կենսատու շողերը, դրանցից միքանիսն էլ ջրի խաղաղ

մակերեսոյթի վրայից անդրագառնալով, կարծես կարեկցութիւնից դրդուած, այրի նեղ անցքից մտան և լուսաւորեցին այլը: Այնտեղ ապաստանածները միայն այժմ իրար նայեցին, իրար ճանաչեցին: Այստեղ էր Մուսօն, Մարօն, Կուզիկենց Միօն, Զրատարենց Գալօն, Զուլհակենց Մարտօն, Խողկոտենց Մանօն, Բողօենց Շաւէջ, Մխիկենց Յովակը, այստեղ էր և քաշալ Սրբէն: Ումանք իրանց ամբողջ ընտանիքով, ումանք ընտանիքի մի մասով միայն, մանր ու մեծ ընդամենը երեսուն հոգի: Բոլորի հառաջանքներից ու լացից այրն առես անքում էր ժայռերի տակ: Մարօն այժմ վիճակակից էր բոլորին. նա պատմեց իր գլխի անցքը: Սրբէն գաղտագողի հայեացքներ էր գցում Մարօնի վրայ, նրան թւում էր, թէ զոհը գիտէ, թէ ով էր իր գահիձը: Այժմ Սրբէն հասկացաւ, թէ ինչու այնքան ժամանակ Մուսօն բացակայ էր գիւղից. բայց ինչպէս էր յաջողեցրել նրան խել բէդի ձեռքից, այդ էր նրան անյայտ: Մարօն մանրամասնութիւնները չը հաղորդեց, նա ասաց միայն, որ ինքը փախաւ:

Պաշարուածները դրսից ոչ մի տեղեկութիւն չունեին, նրանք զուրկ էին նաև պաշարից: Մուսօնի առաջարկութեամբ տղամարդիկ մի կարճ խորհրդակցութիւն կատարեցին և վճռեցին գիշերը հասնելուն պէս երկու հոգի վիճակով ընտրել, որ այրից դուրս գան և թէկուղ մահու գնով դրսից պաշար և տեղեկութիւն բերեն: Հաց ճարելու մասին մտածելն անդամ աւելորդ էր, գնացողները պիտի աշխատէին հորերից ցորեն կամ նոյնիսկ դարի, կորեկ հանել բերել, որպէսզի պաշարուածները մի կերպ գոյութիւնները քաշ տան, մինչեւ որ թշնամինները հեռանան լրջակայքից և նրանք կարողանան դուրս դալ: Պաշարի գնալու պարտքից ազատ պիտի մնար միայն Մուսօն, որովհետեւ եթէ նրան որևէ վտանգ պատահելու լինէր, պաշարուածներն անկարող պիտի լինէին այրից դուրս դալ:

Հասաւ գիշերը: Վիճակը ձգուեց և ընկաւ Զրա-

տարենց Գալօին և քաչալ Սրբէին։ Մուսօն մօտեցաւ և ձեռքը Սրբէի ուսին դնելով՝ ասաց.

—Հը՛, Սրբէ, պատրաստուիր որ շուտով պաշարի պիտի գնաս։

—Պաշարի … ասաց Սրբէն ծործորակը քորելով, երթալուն՝ կ'երթամ, բայց երբ վերադառնամ; ինչպէս իջնեմ այլը։

—Ես կը բարձրանամ և ձեզ ցած կը կախեմ; հէնց որ դուք երեք քար ձգեք ծովը։

—Սիր ես գիւղում ցորնի հորի տեղ չը գիտեմ; շարունակեց պատճառաբանել Սրբէն։

—Գալօն գիտէ, նա ցոյց կը տայ, պատասխանեցին այս ու այն կողմից։

—Թատուած է վկայ, թէ փախչելու լինենք, ես չեմ ազատուի, ոտքս ցաւում է։

—Հը՛, մեռի համ, քաչալ նզոված, որոտաց այս անդամ Գալօն այրի մի մութ անկիւնից. երեսում էր որ նա հետեւում էր այս խօսակցութեանը առանձին սըրտ-նեղութեամբ, որ յատուկ է վշտերի տէր մարդկանց։

Սրբէն զգաց, որ եթէ էլի մի ըոպէ շարունակի իր երկոտ պատճառաբանութիւնները, այդ մուայլ Գալօն նրան ծովը կը դցի, ուստի լուց երբ Մուսօն ժայռի կատարից ցած կախեց պարանը, Սրբէն մահու դատապարտուածի պէս կախ ընկաւ պարանից և վեր բարձրացաւ։ Բարձրացաւ նաև Գալօն։ Մուսօն ցած իջաւ, իսկ նրանք գնացին։

Սկզբում նրանք արագ-արագ էին գնում, բայց երբ մօտեցան գիւղին, աւելի ծանրացրին իրանց քայլերը և վերջապէս կանդ առան։ Հեռու երեսում էր մի լուսաւուրուած վրան, երևի Բահլութէգի վրանն էր. բարբարոս-ները դեռ չէին վերջացրել թալանը։ Գալօն ու Սրբէն զգուշութեամբ ականջ դնելով՝ մի փոքր էլ առաջ անցան և այս անդամ կանդ առան կալերի մէջ։ Նորից ականջ դրին։ Մօտերքում ոտնաձայներ չը կալին։ Մի փոքր էլ առաջացան և այս անդամ Խողկոտենց տան առաջն էին։

Գալօն գիտէր՝ ուր պիտի լինի ցորնի հորը. նա սկսեց փորել, Սրբէին խստիւ պատուիրելով՝ ի հարկին անպայման քրդերէն խօսել: Հաղիւ հորը բացել էին, երբ մօտեցան չորս ձիաւորներ:

—Ո՞վ էք, կոչեց գլխաւորը:

—Մենք ենք, գարի ենք հանում ձիերի համար, պատասխանեց Գալօն առհարկի վստահութեամբ: Սրբէն փորձեց փախչել, Գալօն զգուշութեամբ բռնեց նրա փէշը:

Զիաւորներն անցան, բայց միքանի բայլ արած, նրանք յանկարծ կանդ առան, ինչոր փսփսացին. երևում էր որ նրանք իրանց խարուած զգացին, կամ գուցէ հայ մարդի քրդերէն խօսելը նրանց կասկածելու տեղիք տուեց. նրանք շտապով յետ դարձան:

Գալօն զգաց վտանգը, ուստի վճռեց օգտուել խաւարից և խոյս տալ առանց սակայն փախուստ ձեւացնելու, բայց Սրբէն քանի ոտներում ոյժ կար, փախաւ. միքանի հրացաններ մի անդամից ճայթեցին իրար յետեից և Գալօն գետին գլորուեց սպանուած, մինչդեռ Սրբէն հրացանների ձայնից սարսափած ճչաց և գետին ընկաւ առանց վիրաւորուելու անդամ: Զիաւորները մօտեցան. Սրբէն ձնկների վրայ նրանց առաջը դուրս եկաւ:

—Խնայեցէք, ի սէր Աստուծոյ, ազերսում էր նա ձիերի ոտներին փարելով: Նրան բռնեցին: Քիչ յետոյ Բահլուլ-բէդի վրանի առաջ կանգնած էր նա քրդերով շրջապատուած: Բէդը հրամայեց նրան իր առաջ բերել:

—Ո՞վ ես դու, ֆլայ, հարցըց բէդը:

Սրբէն լուր էր:

—Խնչո՞ւ չես խօսում, մուռտառ, որոտաց բէդը կատաղած:

—Խնայե՞ր, տէր, հաղիւ հազ շշնջաց Սրբէն:

—Խնայե՞լ, մինչաց բէդը, մի ֆլայ քածի համար սարի նման եղբօրս սպանեցիք, գեռ խնայել... Ո՞ւր է Մարօն, շնո՞ւ ֆլայ. ուր փախցրիք նրան, ուր է նրան փախցնողը... Սպասեցէք... տեսէր թէ ինչ կը նշանա-

կէ բէգին սպանել և կինը փախցնել։ Կուռօներ, ճանապարհը դրէք։

Այդ հրամանը սպանել էր նշանակում։ Քրդերը քաշ տուին Սրբէին դէպի մի կողմ և առաջը խարոյկ վառեցին որ հեռուից դէմքը երևայ։ Դա էլ մի առանձին զուարճութիւն էր. նրանք ուղում էին նշան բռնել հեռու խաւարի միջից։ Սրբէն կանգնած էր հազիւ կենդանի, ինչոր բան սաստիկ սղմում էր նրա կոկորդը, շնչել չէր կարողանում, բերանը չորանում էր անդադար, լեզուն քմբին էր կազում։ Ամեն անդամ երբ նրա առաջը խարոյկի բոցը բորբոքում էր և լուսաւորում նրան, այն ժամանակ հեռուից երկում էր անհնարին սարսափից ծամածուած դէմքը, բայց նրա հայեացքն անորոշ չէր, այլ ուղղուած էր կրակի բոցերին, ուր կարդում էր կարծես իր դատավճիռը, փոքրիկ ճակատը կնճուած էր, յօնքերը կիտուած. պարզ էր թէ մի ինչոր միաք այդօրհասական ժամին նրան զբաղեցրել էր։ Նա համազուած էր որ եթէ Մարօին ու Մուսօին մատնի, ինքը կը փրկուի, բաց հաստատ չը գիտէր՝ կը փրկուին արդեօք նաև այրի մնացած փախստականները. չէ որ շատ հեշտութեամբ այս կատաղած բէգը նրանց էլ կարող է ծովս ածել։ Ահա այդ մասին էր մտածում։ Մարօին և Մուսօին մատնելը նրա համար շատ հեշտ գործ էր, չէ որ նրանց պատճառով էր գիւղը թալանի և կոտորածի մատնուել։ Բայց Սրբէն ամեննեին չէր մտածում որ այդ շարիքի սկիզբն ինքն էր գրել։ Նա մտածում էր մնացածների մասին. զոհել նրանց էլ՝ իր կեանքը փրկելու համար, թէ ոչ Բայց չէ որ վերեսում Աստուած կայ. ասում են, որ այդ Աստուածը պատժումէ չարագործութիւնը. եթէ այդպէս է, ինչու համար Աստուած թոյլ տուեց, որ Մուսօն երէկ նրան էլ, ամենքի հետ միասին փրկի, այլն իջեցնի, ինչու նա թոյլ տուեց, որ զոհն իր դահճին կեանք շնորհի. միթէ դժուար էր այնպէս անել, որ պարանը կտրուի և չարագործը անդունդներին կու գնայ։ Չէ, Աստուած չի խառնուում մարդկային

գործերին. Նա թողել է, որ մարդիկ ապրեն, ինչպէս կարող են. ով զօրեղ է, թող ջարդի, գոփի, կեղերի, ով թոյլ է, անկարող է, թող ոչնչանայ: Զէ որ գիւղը կրակ տուին. քանի մարդ սպանուեց... իսկ սպանող՝ ները... ինչ եղաւ նրանց. պատժուեցին... ուր էր Առ տուած: Ուրեմն էլ ինչո՞ւ համար չը փրկուել՝ ինչ գնով և լինի:

Սրբէի համար խիստ ծանր էր աշխարհից բաժանուել թէկուզ մի շատ լաւ գործ կատարած լինելու երջանիկ գիտակցութեամբ. փչացած, ապականուած հոգիները զոհի ընդունակ չեն: «Ես մեղաւոր չեմ, շարունակում էր դատել Սրբէն, ասացի ինձ մի ուղարկէք, ես փախչել չեմ կարող, ես պաշարի գնալու անընդունակ եմ, նրանք ինձ չը լսեցին, անմենքն էլ ուզում էին որ անպատճառ ես գնամ, նրանք իմ մահն էին կամենում, թող այժմ տուժեն»... «Դաւաճանութիւն», լուսեց ներքին ձայնը:

—Իսկ Գալօն, պատասխանեց Սրբէն. նա էլ դաւաճանեց... Հապա ինչո՞ւ սպանուեց:

Հէնց այդ ժամանակ հրացանաւորները տեղ բռնեցին նրա հանդէպ լիսուն քայլի վրայ: Բէդը դուրս եւ կաւ վրանից նայելու: Էլի մի րոպէ և Սրբէն այլիս չէր լինի աշխարհում: Նա այդ հասկացաւ: Երբ քրդերը հրացաններն ուղղեցին, նա մի յուսահատ աղաղակ բարձրացրեց, խնդրելով մի խօսք, միայն մի խօսք ասել: Բէդը նշան արեց որ սպասեն:

—Տէր, Մարօին քո ձեռքը կը յանձնեմ, ինայիր կեանքս, ասաց Սրբէն,

—Ինչպէս, զարմացած կոչեց բէդը. Եթէ ասածդ ճիշտ լինի, ֆլայ, ես ոչ միայն կեանքդ, այլև շատ բան կը պարդեմ քեզ:

—Տէր, ծառադ չի համարձակուի իր տիրոջը խաբել. ես Մարօի տեղը կ'ասեմ; մնացածը դու գիտես:

Եւ Սրբէն յայտնեց Սրնքարի այրում պատսպարուածների գաղտնիքը:

Սև գաւաճանութիւնը կատարուեց. վրանի շուրջը  
մի վայրենի շարժողութիւն սկսուեց և շուտով մի  
ստուար բանակ, առաջնորդ ունենալով Սրբէին, Արնքա-  
րի վրայ կանդ առաւ Սրբէին կախեցին որ պաշարուած-  
ներին համոզի դուրս գալ. Այրում սարսափը տիրեց  
ամենքին, երբ կարողացան որոշել խաւարի մէջ Սրբէին,  
անյայտ ձեռներով կախուած. Մուսօն առաջանալով դէ-  
պի դուռը, առանց կախածին բռնելու, հարցրեց կա-  
տաղած.

—Քաջալ, այդ ով կախեց քեզ:

—«Նրանք», ասաց Սրբէն:

«Նրանք» բառը լսելով՝ այրի ներսում կանայք ու  
երեխաներն ընդհանուր ճիչ բարձրացրին. աւելի հաս-  
կանալի և աւելի զարհուրելի բառ լինել չէր կարող:

—Բայց նրանք ի՞նչպէս իմացան մեր տեղը:

—Զը գիտեմ... հաւատա, չը գիտեմ, ես չեմ ասել.  
իրանք գիտէին, ինձ բռնեցին հետները բերին. կարող  
եմ չը գալ:

—Սուտ է խօսում, գաւաճան է, ձայն տուին այս  
ու այն կողմից. պարանը կտրեցէք, թող վայր գլորուի...  
կտրեցէք, կտրեցէք: Մի խօսիր, Մուսօ, գաւաճան է:

—Զեղ մատաղ, մի արէք, ես անմեղ եմ, խեղճ  
եմ, աղերսում էր Սրբէն. հաւատացէք, նրանք գիտէին  
մեր տեղը, իրանք եկան:

—Ո՞ւր է Գալօն, հարցրեց Մուսօն:

—Ինչո՞ւ քեզ էլ չսպանեցին, անզգամ, կրկին ձայն  
տուին այս ու այն կողմից:

—Դաւաճան է, կտրենք պարանը, և միքանի ձեռ-  
ներ միանդամից մեկնուեցին դէպի պարանը. Սրբէն  
ճօճուեց, անդունդների վրայ զարհուրելի պայուտներ  
գործեց և կրկին առաջուայ տեղում կանդ առաւ: Վե-  
րից կախողները պահում էին նրան, յուսալով որ նա  
բանակցութիւններ է անում:

—Լսեցէք, գոչեց վերջապէս յուսակտուր ձայնով  
Սեպոհմբեր, 1901.

Սրբէն. լսեցէք իմ վերջին խօսքը: Ես ասում եմ, որ նրանք մեր տեղը գիտէին, դուք չէք հաւատում ինձ, բայց բան այժմ այլևս դրանում չէ. կ'ուզէք կարեցէք պարանը, թող ես ընկնեմ շանսատակ լինեմ: այժմ ձեզ եմ հարցնում, իմ մահով կարծղ էք դուք փրկուել: Ի հարկէ ոչ: Նրանք ձեր տեղը գիտեն արդէն, կը պաշարեն ձեզ և դուք ստիպուած կը լինէք սովից անձնատուր լինել և այն ժամանակ աւելի վատ կը լինի ձեզ համար, որովհետև դուք ձեր յամառութեամբ նրանց աւելի կը զայրացնէք: Իսկ այժմ նրանք խօսք են տալիս որ մեզ անվաս կը թողնեն: Նրանք ժամի զարդ անօթեղէններն են փնտրում և կարծում են որ այս տեղ թագցրել ենք: Դուրս եկէք, թող իշնեն տեսնեն որ այստեղ ոչինչ չը կայ, և մենք կը փրկուենք: Լսեցէք ինձ ի սէր Աստուծոյ. մի յամառէք, իմ մահը ձեզ չի փրկի:

Ներքեռում այրի մէջ մի փաքը լոռութիւն տիրեց, մարդիկ խօսում էին փսփսալով: Սրբէի պատճառարանութիւնն ըստ երկոյթին հզօր հաստատուն հիմքեր ունէր. արդարեւ նա էր մատնել թէ մի ուրիշը, այդ այլ խնդիր էր, բաւական էր որ գաղտնիքը բացուած էր և անհնարին էր առանց պաշարի գիմանալ պաշարանը:

Մնում էր կամայ ակամայ դուրս գալ և անձնատուր լինել՝ դահիճներից գլուռթիւն հայցելով. ով գիտէ, գուցէ այժմ նրանք այնքան անդժաբար չը վարուեն, գուցէ խղճան, գուցէ... Անել վիճակի մէջ ամեն մի «գուցէն» մի փրկութիւն է թւում. դա յոյս է, իսկ յոյսը՝ կեանք:

Մուսօն այս բոլորից անջատ իր առանձին հոգսերն ու մտմտուրն ունէր. իսկ եթէ վերի կանգնողները Հիւնի-բէգի մարդիկը լինեն: Թալանի և կոտորածի ժամանակ սարսափած գիւղացիք ոչ ոքի չեն ճանաչել խաւարի մէջ, իսկ Մուսօն համար դա իսկապէս կեանքի և մահու խնդիր էր: Նա մօտեցաւ Սրբէին:

— Լսիր, Սրբէ, ասաց Մուսօն խօրհուրդը վերջանաւ-  
լուց յետոյ. երդուիր Ասածու անունով, երդուիր այս  
այրի մէջ տքնած ճգնաւորների սուրբ աղօթքով, որ  
վերի կանգնողները Հիւսնի-բէգի մարդիկը չեն:

Սրբէն և միայն Սրբէն հասկացաւ Մուսօնի անհան-  
գստութիւնը: Սրբէն այն մարդկանցից չէր, որ ոճրի  
կիսում կանգ առնէր թուլացած:

— Երդուում եմ Ասածու անունով, ասաց նա խա-  
րեբայի անսիրտ վճռականութեամբ, երդուում եմ բոլոր  
ճգնաւորների սուրբ աղօթքով՝ որ վերի կանգնողները  
Հիւսնի-բէգի մարդիկը չեն, սրանք Բոռւկցի են:

Խաւարը ծածկեց այս զարհուրելի կեղծիքը. եթէ  
այդ բոպէին գոնէ երկու հակառակորդների գէմքերը  
լուսաւորւած լինէին, եթէ Մուսօն կարողանար գէթ  
մի անգամ նայել գաւաճանի աշքերին, գուցէ ստու-  
թեան սովոր շրթունքներն անգամ անկարող լինէին  
արտասանել այդ զաղիր երդումը:

Բայց զարհուրելի երդումն արտասանուեց խաւարի  
մէջ և դաւաճանի շրթունքները չայրուեցին:

Հաւատաց արդեօք Մուսօն, դժուար էր իմանալ,  
նա դեռ մտածում էր: Ապա նա գլուխը բարձրացրեց և  
ասաց.

— Դէհ, Սրբէ, այս բոլորի մեղքը քո վզին, ահաւոր  
դատաստանին պարտական մնաս, նզովուած լինիս Յու-  
դայի պէս, եթէ խարսում ես մեղ: Մենք դուրս կը դանք:

Այլը դատարկում էր:

Սրնքարի վրայ վառուեց մի մեծ խարոյկ՝ դուրս  
եկողներին դիտելու համար: Գլխաւորն իսկոյն մօտե-  
նում էր նայում, հէնց որ մէկը բարձրանում էր: Բոլորը  
դուրս եկան, վնացին Մարօն ու Մուսօն: Պարանը մէկ  
էլ կախեցին, երկար ժամանակ ոչ ոք չը կար. վերեսում  
անհանգստութիւն տիրեց, իսկ ներքեսում, այրի մէջ  
դեռ տատանւում էին: Սարսափելի վայրկեան էր: Վեր-  
ջապէս պարանը շարժուեց, բարձրացողն այս անգամ  
Մարօն էր, վայրենիների մէջ փսփսուկ ընկաւ: Ամենքը

կռացան դէպի ծովը։ Քանի բարձրանում էր, այնքան  
նրա դէմքն աւելի էր լուսաւորւում։ արդէն մօտ էր  
ժայռերի շրթունքին, երբ Մարօն գլուխը բարձրացնե-  
լով տեսաւ կրակի լուսով լուսաւորուած միքանի ծա-  
նօթ դէմքեր։ Հիւսնիւթէգի մարդիկն էին, նոյն գա-  
զանները որ իրան փախցրին։ Նա լաւ ճանաչեց եւ  
այն վայրկենին՝ երբ նա ճանաչեց այդ զարհուրելի  
դէմքերը, մի սրտաճմիկ ճիչ արձակեց։ «Նղնվք քեզ,  
Սրքէ», գոչեց և օրհասական ցնցումով ոռները դէմ  
տուեց ժայռին։ քաշողի ձեռքից պարանը յանկարծ  
դուրս պրծաւ և մինչև որ վերի կանգնողները կը կա-  
րողանային նոյնիսկ մի փոքր հաշիւ տալ իրանց այդ  
անակնկալ և զարմանալի գիպուածի մասին։ Մարօն  
անդունդների վրայ զարհուրելի պտոյտներ կազմելով՝  
ծովս ընկաւ սարսեցուցիչ ճղփիւն առաջ բերելով։ Վե-  
րեւում սկսուեց գոռում-գոչում, հայհոյանը, աղաղակ.  
բայց այդ անասելի ոռնոցները անկարող եղան խլացնել  
այն սպանիչ ճիչը, որ լսուեց այրի առաջից եւ ջրերի  
երկրորդ ճղփիւն եւ ցոյց տուեց մի երկրորդ մարմնի  
ծովս ընկնելլը։ Արդեօք Մարօն փրկելու, թէ նրա հետ  
միասին ալիքների սառն ծոցում գերեզման գտնելու  
համար էր որ Մուսօն իրան ծովը նետեց, այդ ոչ ոք  
չիմացաւ, միայն մի առժամանակ ներքեւից դեռ լրա-  
ւում էին երկու խեղդուողների օրհասական հոնդիւն-  
ները ջրերի աղմկին խառնուած։ շուտով այդ էլ գա-  
դարեց։

Դահիճների կատաղութեանը չափ չը մնաց։ Գլխա-  
ւոր որսերը նրանց ձեռքից ճողովրել էին, ի՞նչ փոյթ-  
թէ մահու գնով։ ուստի նրանք իրանց վրէժինդրու-  
թիւնը մնացածների վրայ թափեցին։ Խաւարի մէջ Արդն-  
քարի վրայ սկսուեց մի պժգալի գործ. արին էր հո-  
սում։ Կիսակենդան վիրաւորները ծովս էին նետեւում  
«Նղնվք քեզ, գաւաճան» գոռալով։ Ներքեւում, խաւարի  
մէջ ոչինչ չէր երեւում, միայն ջրերն աղմկւում էին  
խեղդուողների օրհասական շարժումներից եւ լսում

էին՝ «Նզ՞վը ըեղ, դաւաճան» աղաղակները։ Ոչ ոք չը կարողացաւ խաւարից օգտուել եւ խոյս տալ ազատուել։ Չը կար նաեւ Սրբէն։ իր սեւ դաւաճանութեան այսպիսի ելքը սոսկումով պատեց նոյնիսկ դաւաճանին, եւ նա ժամ առաջ փախաւ, կորաւ խաւարի մէջ։

## X

Անցան տարիներ։ չարը չը հեռացաւ այն աշխարհից։ նա այն աշխարհի մասն էր, նրա հարազատ զաւակն էր, նրա միսն ու արիւնն էր։ Թշուառների և խեղճերի աշխարհ էր գա, որոնք չարիքի հետ, խեղճութեան հետ վաղուց եղբայրացած ապրում էին։ Բայց չարը գոհ չէր, նա արեան ծարաւ ունէր։ Խեղճերն այդ էլ տուին, յուսալով թէ երբ ծարաւը յագենայ, կը հեռանայ իրանցից։ բայց ոչ, չարիքը կուշտ խմեց և մնաց նոյն աշխարհում։ նա հանգիստ էր առնում միայն Վայրենի մարդի մէջ նստած դազանը յոգնեց, ինչ զարմանք, երբ դաշտի գաղաններն էլ մարդի մսով յդիմացան։

Սարերի և այրերի ծածկուածներից ոմանք չեկան այլես, յաւիտենական ընող ընեցին ձիւների սառցէ ծոցի մէջ, ուրիշներն էլ գնացին պատմելու աշխարհին իրանց ցաւերը։ իսկ մի խումբ խեղճեր էլ, որոնց համար մահու հաւասար էր հեռանալ իրանց պապերի հողից, իրանց հայրերի գերեզմաններից, վճռեցին չարիքի և խեղճութեան կրկին դաշն կապել՝ որ իրանք ապրելու, օգ շնչելու իրաւունք ունենան, իսկ նրանք էլ կուշտ լինեն։ Պայմանն ընդունուեց, խեղճերին ներուեց՝ մահից խոյս տալու իրանց յանդգնութիւնը և նրանք կրկին մտան իրանց տակաւին ծխացող աւերակները։ պէտք էր ամեն բան նորից սկսել…

Գ... գիւղն էլ իջան միքանի հոգի, այդ գիւղի աւերակների մէջ էլ բահեր և մուրճեր երեացին։ Խըրճիներ էին շինւում, կամաց-կամաց գիւղում ձայն ու

աղաղակ էլ լսուեց, գաշտերն էլ հետզհետէ մշակուեցին,  
Աստծու տունն էլ նորոգուեց: Հրաշքով փրկուած ծե-  
րունի հօվիւը իր հօտի մնացորդն անտէր, անմիսիթար  
չը թողեց, նա էլ եկաւ, Աստծու խօսքով պէտք էր  
զովացնել միսիթարութեան կարօտ սրտերը Եւ մարդիկ  
ազօթում և աշխատում էին, աշխատում և ազօթում  
էին:

Ո՞ւր էր մինչեւ այդ ժամանակ քաջալ Սրբէն, այդ  
ոչ ոք չիտէր, միայն նա էլ յայտնուեց մաշուած,  
ծերացած, խօր ընկած աչքերով, մոայլ ու անհանգիստ  
հօգով: Անտէր տներ, անմշակ արտեր շատ կային. ին-  
չու մի խրճիթ էլ նա չը նորոգի, արտի տէր դառնայ,  
ապրի: Եւ սկսեց. բայց բահի առաջին հարուածի հետ  
մոխրակոյտի տակից դուրս ցցուեց մի խանձուած դիակ,  
աչքերը ճոթուուած, շրթունկները քաշքչուած եւ ատամ-  
ների սղմուած շարքերը բաց. զարհուրելի էր... Սրբէին  
թուաց թէ նոյն ինըը վրէժինդրութիւնն է այդպէս մար-  
մին առել. վաղուց էր ինչ այդ պատկերը դիշնը ցերեկ  
հալածում էր նրան: Նա բահը սոսկումով վայր գցեց  
ձեռքից եւ փախաւ: Նրա ականջներում հնչում էր՝ «Իը-  
զնվք քեզ» բառը: Նա փախչում էր առանց յետ նայելու,  
փախենալով՝ մի գուցէ յետեւում տեսնի դիակի դէմքը,  
փախչում էր առանց հաշիւ տալու, միայն մի անյաղ-  
թելի պահանջից դրդուած: Վերջապէս նա դուրս եկաւ  
դաշտը, թափառեց սար ու ձոր, թափառեց ամբողջ  
դիշեր: Այդ ժամանակ նա միայն մի բան էր մտածում:  
փախչել որքան կարելի է հեռու ծովափի ժայռերից,  
հեռու արիւնոտ Արնքարից Բայց որքան մեծ եղաւ  
նրա սարսափը, երբ յանկարծ իրան դտաւ հէնց Արքն-  
քարի ժայռերի վրայ: Ինչու էր եկել այնտեղ, այդ ինչ-  
պէս էր պատահել, նա չը դիտէր. միայն խաւարի մէջ  
ցցուած ժայռերը սարսափելի էին. դիակներ, դիակներ,  
շարան-շարան կանգնած, մէկը միւսից աւելի մեծ, մէ-  
կը միւսից աւելի զարհուրելի, դարձեալ ճոթուուած աշ-  
քեր, բաց ատամներ, այրուած, խանձուած դէմքեր, բո-

լորն էլ սարսափելի, բոլորն էլ ահաւոր։ Սրբէն շտապով ծածկեց աչքերը, շուռ եկաւ, շտապեց հեռանալ. բայց հէնց նոյն բոպէին ալիքները զարկուեցին ժայռերին եւ բոլորը միասին քարերն ու ջրերը մի հսկայական հառաջանքի հետ՝ «Նզնվք քեզ» ասացին։ Սրբէն դողաց, նա այժմ փակեց նաեւ ականջները, ի զաւր. ձայնը չէր դադարում, ուստի նա փախաւ կրկին, փախաւ դէպի հեռաւոր դաշտերը, հեռու, հեռու ծովափից, օրպէս զի մոլորուելով ակամայ կրկին ծովափը դառնայ, Արքն քարի ժայռի վրայ յայտնուի, ծովին նայի, ալիքների «Նզնվքը» լսի, դողայ, սարսուի և կրկին, քանի ոյժ ունի, փախչի դէպի դաշտերը։ Քանի՞ քանի անդամ նա փախաւ այդ սարսափելի տեղերից, բայց ամեն անդամ մի աներեւոյթ զօրութիւն, հակառակ իր կամքին, անդիւտակցաբար, նրան դէպի ծովափը ըշեց. նա կրկին ու կրկին լսեց ալիքների «Նզնվքը» եւ զարհուրելի ճիչ արձակելով՝ աչքերն ու ականջները փակած, դիզացած մազերով յետ դարձաւ ու փախաւ անյայտացաւ խաւարի մէջ։

Մօտ էր լուսաբացը, երբ տանջուած եւ ուժասպառ Սրբէն բաղխեց ծերունի քահանայի դուռը։ Քահանան դուրս եկաւ. իր առաջ կանգնած էր Սրբէն դողդողալով. նրա ատամներն իրար էին զարկում. նա երերում էր, լուռ էր։ Զարմացած քահանան կասկածով նրան նայեց եւ հարցրեց.

—Ի՞նչ կայ, որդիւ։

—Տէր հայր, առաւոտեան ժամը չը պիտի՝ ասես, լուսաբացը մօտ է, գնանք ժամ։

—Կ'ասեմ, ապա չեմ ասի։ Բայց ինչու ես դողում։ Ինչը քեզ ստիպեց այսօր դալ ինձ արթնացներ։

—Աղօթել եմ ուզում, տէր հայր։ Արթուն էի, եւ կայ դուռը թակեցի. աղօթել եմ ուզում, գնանք... ժամ ասելու ժամանակ չէ. գնանք էլիի։

Քահանան շուարած էր. Սրբէն ու այսպիսի բան. Ի՞նչ էր պատահել։ Բայց եւ այնպէս նա դուրս եկաւ, թէեւ

դեռ առաւօտեան ժամերգութեան համար վաղ էր, երբ եկեղեցուն հասան, Սրբէն չը թողեց քահանային դուռը բանալ:

—Կեցիր, տէրտէր, ասաց նա, քահանայի աջը բըռանելով, ժամ՝ ասելու դեռ ժամանակ կ'ունենաս, միքիչ վաղ է, այնպէս չէ... Գնանք հանգստարան, գերեզման ունեմ օրհնել տալու:

Սրբէի գէմքը սարսափելի էր, աչքերը խաւարի մէջ վառւում էին, պահանջը տարօրինակ էր. գիշերուայ այդ ժամին գերեզման չեն օրհնում: Քահանան երկչուներից չէր, բայց այս մարդի վարմունքը չափից դուրս կասկածելի թուաց նրան. Սրբէն նրան ոչ թէ երկիւղ, այլ արգահատանք էր ներշնչում. քահանան զգում էր որ մի ինչոր ծանր վիշտ կրծում է նրա սիրտը:

—Որդիս, Սրբէ, ասա ինձ է պատահել քեզ. դու տանջւում ես, քո հոգին խովուած է, ախր ինչ գերեզման օրհնելու ժամանակ է. թող մնայ ցերեկով, իսկ այժմ ներս մտնենք եկեղեցի եւ պատմիր ինձ քո ցաւերը:

—Մեռնեմ քս աջին, տէրտէր ջան, աղաչում եմ, օգնիր, փրկիր ինձ, փրկիր... Ո՞ւր փախչեմ, ինձ ուտում են, խեղդում են, հալածում են, ես չեմ կարող այլ եւս, դա իմ ուժից վեր է. հայր, դու դոնէ մի թող ինձ գնանք, գնանք օրհնիր գերեզմանները, ոտքերդ ընկած աղերսում եմ:

Սրբէն ծունկ չոքեց, գրկեց քահանայի ոտները եւ սկսեց դառնագին արտասուելու Քահանան ապշած էր զարմանքից, բայց եւ սաստիկ զգացուեց: Այս մարդի անծանօթ վիշտը նրան ահագին թուաց եւ նա վճռեց գնալ նրա հետ՝ ինչ և պատահելու լինի: Հասան գերեզմանատուն, բայց Սրբէն շարունակում էր գնալ:

—Ո՞ւր ես գնում, ուր ես տանում ինձ այսպէս կէս գիշերով, կոչեց այս անգամ սարսափած քահանան, կանդ առնելով գերեզմանատանը:

—Այնտեղ, տէրտէր ջան, այնտեղ է գերեզմանը. արի աղաչում եմ, արի, դու չը գիտես, դու չես տեսել այդ գերեզմանները։ 0՝, ոչ ոք, ոչ ոք չի տեսել բացի ինձանից, արի կը տեսնես քանի՛ ոն են...

Քահանան դարձեալ գնաց։ Հասան ծովափին եւ կանգ առան Արնքարի վրայ։ Դարձեալ քամի էր, դարձեալ ալիքները զարկում էին ափերին, գոռում, որոտում, ոռնում ու հառաշելով ներքեւ գլորում։ «Նզնվը, նզնվը քեզ» լսեց Սրբէն ալիքների որոտի միջից։ Նրա դողը սաստկացաւ, երերաց ու սարսափով բռնեց քահանայի աջը եւ միւս ձեռքը դէպի ծովը մեկնելով ասաց.

—Լսում ես, տէրտէր, այ նրանք են, գոռում են. այստեղ բոլորը գերեզման է, նա ցոյց տուեց Արնքարի տակ աղմկուղ ալիքները. լսում ես... 0օ, դիշերն այսպէս միշտ դուրս են գալիս և «Նզովք» են գոռում։ Ախր առանց քահանայի են թաղուել, սուրբ աղօթք չեն լսել... ես թաղեցի, մենակ ես... նրանք էլ դուրս են գալիս... նրանք էլ...

Բայց այդ բոպէին կրկին եկան դիզացած ալիքները, կրկին զարկուեցին ափերին ահուելի շրփոցով։

—0՝, էլի գոռացին, լսեցի՞ր, տէրտէր. գոռում են, գոռում են, լալիս են, լալիս. աղօթք են ուզում, սուրբ աղօթք, քահանայի աղօթք,—ասաց Սրբէն սիրտ պատառող ձայնով և ականջներն ու աչքերը ծածկեց վերաբերի ծալըերի մէջ։ Քահանան սկսում էր վախենալ. նա չը գիտէր ինչ անել այս խելագարութեան հասած մարդի հետ. իսկ ալիքները շարունակում էին աղմկուել, շարունակում էին «Նզովք» գոռալ։

—Աղօթիր, ճշում էր Սրբէն, թաղման աղօթք ասա, թնդ լռեն, թնդ չը գոռան, չը նզովեն, այնպէս չէ. ախր որ թաղես, էլ չեն գոռայ, խօսիր էէ... վայ, աղօթիր, աղօթիր էէ... դէ աղօթք ասա, թնդ հանգըստանան, յուսահատ կերպով գոչում էր Սրբէն։

Քահանան այս անգամ սարսափեց. նա ոչինչ չէր

հասկանում, բայց զգում էր, որ մի զարհուրելի գաղտնիք կար այս մարդի խօսքերի մէջ:

—Որդիս, Սրբէ, տան դառնանք, դու հիւանդես, գնանք քնիր հանգստացիր...

Դարձեալ ալիքները զարկուեցին, դարձեալ Սրբէն լսեց՝ «Նզնվը քեզ, նզնվը»:

—Ազօթի՛ր, ճշաց Սրբէն... հոգւոց ասա, հոգւոց ասա:

—Ո՞ւմ համար հոգւոց ասեմ, որդի, չէ որ այստեղ գերեզման չը կայ:

—Գերեզմաններ կան, շատ կան այստեղ, այ հէնց այստեղ... Դու չես իմանում, դէհ լսիր, ես ասեմ է՛ս, որ ասեմ կը ներես... Տէրտէր, Յուղային չը ներեցին, համ...

—Չէ, որդի, Յուղային ինչպէս կարելի էր ներել. նա մատնիչ էր:

—Իսկ ինձ կը ներես, այնպէս չէ...

—Կը ներեմ, զաւակս, թողութիւն կը տամ. ասա, պատմիր յանցանքդ:

—Հապա եկաք տեղաւորուեցիք, շէնցաք, նստեցիք, հէջ չը հարցրիք, թէ ուր են Զօբանենց Մուսօն, Սհօխ Մարօն, Կուղիկենց Մխօն, Զուկհակենց Մարտօն, Խողկոտենց Մանօն, ուրիշ մանր ու պետ, ուր են, գիտես... Այ, այս քարի տակ այր կայ, այն օրը նրանք այստեղ էին ծածկուած, ես իմացայ, ես տեղերը յայտնեցի, ես մատնեցի, խաբեցի... դուրս եկան այրից եւ նրանք կոտորեցին բոլորին, ծովս ածեցին, այստեղ, այս քարի տակ ձգեցին. թողութիւն կը տամ, տէրտէր... Յուղային կը ներեն, թողութիւն կայ մատնիչին...

—Ո՛չ, մատնիչին թողութիւն չը կայ, ասաց քահանան վշտացած:

—Չը կայ...

—Չը կայ:

Ալիքները նորից զարկուեցին, «Նզնվը քեզ, նզնվը» գոռացին. Սրբէն լսեց, էլ չապասեց, նա մի գերմարդկային ճիչ արձակեց եւ ահագին թափով ժայռի կատարից

վայր նետուեց ծովի անդունդների մէջ։ Զօհերին ընդունող ալիքները դահճին էլ ընդունեցին իրանց ցուրտ ծոցում։

Քահանան այս անգամ մօտեցաւ ծովափի շրթունքին, վշաացած հոգով բարձրացրեց դողդոջուն ձեռքը, խաչակնքեց ալիքների տակ թաղուած նահատակների մարմինները եւ «հոգւոց» ասաց։ Միքանի կաթիլ արցունքներ թափուեցին նրա ծեր ազքերից ալեզարդ միւրուքի վրայ, ապա նա յետ դարձաւ եւ առաւօտեան ժամը սկսեց։ Նրա ձայնն այդ առաւօտ աւելի էր դողում եւ բառերը դուրս էին դալիս բերանից վշտոտ հնչիւններով։

Ասում են որ մինչեւ այժմ՝ էլ ծովում, այնտեղ ուր ընկած է դաւաճանի մարմինը, ջրերի խաղաղ թէ խոռված ժամանակ, ալիքներն անդադար տակն ու վրայ են լինում, պտոյտ են դալիս, եռում, աղմկում, ասես թէ դժգոհ են որ իրանց սուրբ ծոցի մէջ թաղուած է դաւաճանի մարմինը նահատակներին մօտիկ։

Եւ մինչեւ այժմ՝ էլ նրանց ահաւոր գոռոցի մէջ լուսում են՝ «նզնվք քեզ, նզնվք» աղաղակները։

Ա. ԱՀԱՐՈՒԵԱՆ